

Հ. Յ. Գ.
ՄԱՍԼՈՅ ԴԻՐԱՆ

ԴԻՐՈՇԱԿ

„ՀԱՅ ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԴԱՂՆԱԿՑՈՒԹԵԱՆ“ ՕՐԳԱՆ

1904

„Droschak“
ORGANE
de la Fédération
Révolut. Arménienne.

ԴՐՈՇՆԿ

„ՀԱՅ ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԳԱԶՆԱԿՑՈՒԹԵԱՆ“ ՕՐԳԱՆ

Վ Ի Ժ Ի Ս Ե Ր Ո Ւ Ն Գ

Աչքերը յառած այն մեծանուն լեոներին, որտեղից յեղափոխական կռուի և մարտիրոսութեան լուրերն են հնչում, հայը դարձեալ մի անգամ մրմնջաց «Մի՞թէ այս անգամ էլ ապարդիւն պիտի անցնի յորդառատ արիւնը, զոհերի այս երկար շարանը»:

Քաղաքական փոթորիկ ենթակայ հայութիւնը այդ հարցումը արդէն մի քանի անգամ է կրկնել իր ապստամբական պատմութեան կարճատև շրջանում. — 1894-ին, երբ հերոսական Տաւրիկը առաջին անգամ ժողովրդական տաղերի հիացման առարկան եղաւ. 1895-ին, երբ ստրկութեան փոշին թօթափող ժողովուրդը գետերի չափ առատ արիւն տուեց բռնապետի սուրին. 1895-ին, երբ ապստամբ Զէյթունի կատարներին լեռնականների ձեռքով ազատութեան դրօշն էր ծածանում, և դրանից յետոյ այն ինկելի օրերին, երբ վրէժի կոչը Փաշաօսկան ազատագրութեան էջերի մէջ քանդակեց այն անմոռանալի փաստերն, որոնք Բանկ-Օտոմանից և Խասսորից սկսած մինչև այսօրայ Սասունը՝ հայկական յեղափոխութեան արիւնլայ ճակատի անթառամ դափնիներն են կազմում:

«Մի՞թէ այս անգամ էլ»...

Նոյնն է հարցը, ճշտող ու ճակատագրական ըստ ձևին, բայց տարբեր շրջապատող հանգամանքների տեսակետից, տարբեր իր վշտի և յոյսերի քանակով:

Տասը տարի առաջ ինչպէս և այն ողբալի օրերին, երբ հայը ապստամբի փոխարէն մ'որթւողի էր դերին միայն արժանացաւ, այդ հարցը յուսահատական էր և խոյնիսկ հոմանիշ քաղաքական մահաւան: Անարգ խոնարհութեան այն տխուր օրերին, սուլթանական եաթաղանը գտաւ հայկական երկրի համարեա բոլոր տեղերում կախաւած պարանոցներ՝ յարմար կտրելու համար, և ստրկական շրթունքներ՝ պատրաստ ներբողներ կարդալու սրածուծեան և նրա անզուգական հեղինակին: Եւ արեան երկրից դուրս, բոլոր այն վայրերում, ուր իրաւունք կար միմիայն ցասման և բողբոխ որոտ լսելու, ամօթալի աջողութեամբ իր համար լայն ճանապարհ էր գտնում այն ստրկամիտ, չարագուշակ բուլին վայել կանչը, որ ամբողջ մեղքը ձգում էր յեղափոխականութեան վրայ, ազատութեան անյողբողք քարոզիչների շընթին...

կռիւ չէր այն, այլ կոտորած:

Բողբո չէր այն, այլ արտասուք:

Այժմ, տանեակ տարիների անցումից յետոյ, — աննշան ժամանակամիջոց ազատութեան յաղթանակի համար — նոյնիսկ այն տխուր փաստի դիմաց, որ թշնամին շարունակում է գիւղերը քանդել ու աւանները գերեզմանոց դարձնել, յուսահատութեան փոխարէն՝ մտածողին ներկայանում է մի հեռանկար, որ իր մէջ վերջնական յաղթանակի տեսանելի սաղմն է կրում:

Չկայ այլևս մորթւողների լէգէօնը: Պատրաստի պարանոցի փոխարէն՝ օրի մէջ նկարւում են սպառնական բռունցքներ, դաշոյն ու մօսիններ: Ուղերձներին յաջորդել են բողբոքները: Հաւատարմութեան երդմագրերը սուղ էֆէնտիութեան գլխին շողում է տէնօրի դաշոյնը: Գեղջիկական ծածկոցների տակ սաղմոսների փոխարէն՝ ռազմի երգեր են հնչում: Հայը այլևս մորթւող չէ, այլ կուռղ և արտասուող փոխարէն՝ բողբոքող: Եւ մարտի ալիքները խփում են հեռուն ու հեռուն...

Այդ երևոյթը — ընդունելով որ դա փաստ է — պիտի համարւի հսկայական առաջադիմութիւն հայկական կռուի պատմութեան մէջ, կատարւած համեմատաբար կարճ ժամանակամիջոցում, և միաժամանակ մեծ մխիթարանք այն՝ նոյնպէս հսկայական՝ զոհերի դիմաց, որ տանջող ժողովուրդը բերեց ազատութեան գործին, ի մեծ հիացումն և ի մեծ սոսկումն ամբողջ աշխարհի...

Թշնամին ջանք չինայեց և շարունակում է նւազեցնել հակառակորդի թիւը. նա հրճանքով է հաշուում այն յօշոտած դիակները, որոնք թափթփւած են լեռների լանջերին ու ձորերի մէջ և իր յաղթանակի լաւագոյն ապացոյց է կարծում աւերակ գիւղերը, ուր արդէն թագաւորում է գերեզմանական լուսութիւնը: Սակայն այդ կործանիչ, կոյր քաղաքականութեան մէջ՝ նա տխմարօրէն չտեսնելու է դնում այն հերոսական դիմադրութիւնը, որ հայ մարտիկները ցոյց են տալիս սուլթանական մեծաթիւ զօրքերին, ինչպէս և այն կենդանարար, սիրտ ու շունչ տուող հոգեբանութիւնը, որ կազմում է հայկական ժողովուրդի այսօրւան յատկանիշը, նրա վերջնական յաղթանակի էական սաղմը:

Ժողովրդական այդ հոգեբանութեան մէջ է մեր ուժը: Նա է, որ հաւատ է գցել երկրից դուրս, ամբողջ կովկասեան հայութեան մէջ, հակառակ ցարիզմի

ձեռք առած խստագոյն արգելքների. նրան ենք պարտական այն վսեմ ոգևորութիւնը, որ դէպի արեան երկիրն է մղում բազմաթիւ խմբեր, որոնք դիւցազնական անձնւիրութեան ապացոյցներ են տալիս Բասենի ձորերում և Զիվինի ամրութիւնների մէջ. նրանից է բղխում այն «խենթ թուփէն», որ դէպի կուր և դէպի ազատութիւն մահն է տանում հասարակ գեղջուկներին, որոնք ստեղծագործեցին թշնամու երևակայութեան մէջ հայ ֆէդայու հմայիչ ու հայ տէնորիստի սարսեցնող տիպարը...

Փորձութեան տանեակ տարիների ընթացքում հայը փորոքացաւ թւով բայց մեծացաւ սրտով — Թիւրքն է որ յաղթում է, այլ յաճախ՝ տեսակը: Գրա մէջն է գաղտնիքը օսմանեան շարունակական անկման՝ Յունական կղզիների վրայ և Բալկանեան լեռներում: Մօտ քսան միլիոն օսմանցիների դէմ ըմբոստացող յոյն ու բուլղարները թշնամու քառորդն անգամ չէին կազմում: Ազատութեան կուրը թւաբանութեան վրայ չէ հիմնւած, այլ ազգերի հոգեբանութեան:

Եւ հայկական «մեծացող սրտի» մէջ երկու վիթխարի զգացմունք — ազատութեան՝ իբրև վերաշինող ուժ և վրէժի՝ իբրև քանդող զօրութիւն — միմեանց փարած՝ յարատև աճումով անխուսափելիորէն դէպի յաղթանակ պիտի տանեն այն մեծ ողբերգութիւնը, որ խաղացում է Փղբը-Ասիայի արևելեան շրջանում:

Եւ ներկայ օրերին, միայն ազատութեան կրակը չէ, ինչպէս տասն տարի առաջ, որ վառում բորբոքում է նահատակ ժողովրդի ծաղիկ-ուժերը, այլև վրէժի զգացմունքը, — արդարութեան ձայնը բռնութեան երկրում — որ անորակելի ոճիրներից փրփրած, շիկացած՝ շնորհիւ այն ստղծումների, որոնց թատրն է այժմ ամբողջ Հայաստանը, դարձել է ամբողջ սերունդների ղեկավար աւետարանը, սրբազան կտակը:

Անմղների արիւնը անհետանք չի անցնի, ինչպէս և աւերակ գիւղերի մռայլ պատկերը: Անպատեւած մայրերի դիակների վրայ և կրակի մատնեւած տների աշխարհում վրիժառու սերունդներ են սնւում, պատրաստ անօրինակ ցնցման, ընդունակ նոյնիսկ «տարդի» խստութիւնների:

Վրէժի սերունդ:

Դա է անունը ներկայ հայ-մարտիկների, բուսած և պատրաստուած օսմանեան ընթացքի քուրայի մէջ: Եւ վրէժի հարւածը կը լինի վճռական, անխնայ. գալիք օրերն էլ՝ սոսկ ուժի օրեր, ընդունակ յիշեցնելու դահիճներին մահադակնութեան կլասիկ դարձածքը:

«Երբեւեռով եբերեց երկինքը,
Սարերը միմեանց մօտ գնացին»:

Վաղ թէ ուշ, կը հասնի այդ պանչելագործ օրը:

Հ Ե Ռ Ա Գ Ի Ր Ն Ե Ր

(ՍԵՓԱՎԱՆ)

ԿԱՐՍ, 8/21 յունիս

Կայծակի ձիւնոր խուճբը, 30 հոգուց բաղկացած, մեծ դժւարութիւններով յաջողեց երկիր մտնել: Նպատակն էր՝ ըստ կարելոյն խոյս տալ ընդհարումներից, Մուշի դաշտը հասնելու համար: Սակայն այդ նրան չաջողեց: Յունիս 6-ի գիշերը, ժամը 12-ին, խուճբը նկատուում է սահմանապահ թիւրք զինւորներից: Սկսուում է երկու կողմից կատաղի հրացանաձգութիւն: Մերոնք յաջողութեամբ կուրելով, իրենց ձգում են Խօրում կոչւած նպաստաւոր դիրքերը: Մինչև այդտեղ հասնելը՝ գիշերային հրացանաձգութեան միջոցին՝ յայտնի չէ, եղել են արդեօք սպանւածներ: Խորումը գտնուում է ուսական սահմանից մօտ 3 ժամ հեռավորութեան վրայ և հռչակաւոր Զիվինի ամենամատակ կէտերից մինն է: Բնական ամրութիւններից զատ՝ կան և արհեստական խրամատներ ու մարտկոցներ, շինւած վերջին ուսութիւրքական պատերազմի ժամանակ: Այդ մարտկոցների մէջ է, որ հայ խուճբը ամբացած՝ կուրում է յաջողութեամբ մինչև հետևեալ օր կէս օրւայ ժամը 2-ը:

Այստեղ կանգ է առնում մեր սուրհանդակը: Հետևանքները յայտնի չեն: Տեղեակ մարդիկ մեծ գովեստով են խօսում այդ դիրքերի մասին, սակայն ասում են, որ ջրի պակասութիւնը շատ պիտի նեղէր մերոնց: Խմբի վատնեւորը ծրագրել էին՝ 7-ի գիշերը մի կերպ դուրս գալ այդ դիրքերից և անցնել դէպի աւելի ամուր դիրքեր, — մօտակայ գերեհու լեռները: Յաջողե՞լ է այդ թէ ոչ — այդ մասին լուր չունինք: Ապաստւում ենք անհամբեր:

ԹԱԻՐԻՉ, 5 յուլիս

(հնդա-ւերոպական գծով)

Յունիսի 7-ին Բասենի մէջ յայտնեց Անդրանիկի ընկեր. Կայծակի ձիւնոր խուճբը, որը ունեցաւ զօրքերի և քիւրդերի հետ մի խիստ ընդհարում: Ապրստամբները աջող դիրքեր բռնեցին վերջին ուսութիւրքական պատերազմի միջոցին հռչակւած Զիվինի բերդի աւերակների մէջ: Կուրը շարունակեց մի օր: Հաւաքեցին 4000-ից աւելի զօրքեր և քրդեր, որոնք մի քանի անգամ փորձեցին գրոհ տալ ու դիրքերը վերցնել բայց մեծամեծ կորուստներ տալով տեղացող ուսմբերից և մօսինի գնդակներից՝ յետ նահանջեցին: Կուրը յուսահատական դարձաւ իրիկնապահին. մի քանի դիրքերից կատարւած յարձակումները դարձեալ յետ մղեցին: Թշնամին թողեց դաշտի մէջ բազմաթիւ դիակներ: Զիւնոր խուճբը 25 զոհ տուց: Մնացածները գիշերային մթութեան շնորհիւ՝ պատուեցին շղթան և անցան: Թշնամու կորուստը հաշուում է 3-400: Սարսափը աննկարագրելի է: Հէնց այժմ լուր հասաւ, որ կենդանի մնացած ապստամբները շարունակում են կուրել:

„ԴժՈՒՔ“ ԳԵԾԵԼԱԽՄՐԻ ԿՌԻԸ ԶԻՎԻՆԻ ԲԱՐՁՈՒՆՔՆԵՐՈՒՄ

(Կուլմ մասնակից զինուորի պատմածը)

7 յունիսի, 1904

Երկիրը երկունքի մէջ էր և օգնութեան էր հրաւիրում իր զգայուն, կրակոտ զաւակներին: Տանջուում էինք բոլորս, լսելով մեր կտորիճ ընկերների խիզախ ու արիւնտ ընդհարումները քուրդ ու տաճիկ բարբարոսների հետ Սասունում, Գաշտում, Խուլը ու Խիանք գաւառներում. մեզ համար էլ հանգիստ չկար, կեանքը դժոխք էր եղել, կերած խմածներս՝ լեղի:

Վրէժխնդրութեամբ վառւած, երբ լսեցինք, որ մեր նախկին ընկեր Վայծակը — Վաղարշակ Բաղդասարեան — հեծելխմբով պէտք է երկիր անցնի, դիմեցինք կազմակերպութեան և ընդունեցինք „ԴժՈՒՔ“ խմբի մէջ իբրև զինուոր: Մեր ուրախութիւնը չափ ու սահման չունէր: Ամբողջ խմբի միակ փափազն էր, եթէ հնարաւորութիւն լինի, անցնել մինչև երկրի խորքերը, իսկ եթէ ոչ՝ կուէլ հէնց Բասենում, հայ ժողովուրդի այն գահիճների գէմ, որոնք Ֆէդայու ուժն ու յանդգնութիւնը մի քանի անգամ արդէն չափել ու զգացել են:

Մայիս 31-ին Գ. գիւղում, ամբողջ խումբը, որ 29 ձիաւորներից էր բաղկացած, հաղորդեց և դրօշակի սրի ու խաչի վրայ վերջին անգամ երգեց մինչև արեան վերջին կաթիլը կուէլ թշնամու գէմ, միշտ բարձր պահելով հայ յեղափոխական դրօշի պատիւը: Վերջացնելով երեկոյեան ընթրիքը, հրաժեշտի համբոյրներ տւելնք մնացող ընկերներին, որոնք այնքան նախանձում էին մեր բախտին: Այդ գիշեր մի քանի անակնկալ պատահարներ մեզ ստիպեցին մտնել հայկական Պ. գիւղը և մի քանի օրով յետաձգել խմբի թիւրքիս անցնելը: Վերջապէս յունիս 6-ի գիշերը, 29 հոգուց բաղկացած խումբը ուսական սահմանապահների մօտից անցաւ, առանց նկատուելու, սակայն տաճիկների մօտից անցնելիս՝ նկատեց թիւրք պահապաններից, որոնք „Ո՞վ էք“ պոռ ալով, կրակեցին մեզ վրայ, իսկ մենք մեր մտուզեր տորձանակներով պատասխանելով՝ առաջ սլացանք ու կորցրինք մեր հետքը: Գեռ չորս ժամ էր մնում մինչև լուսանալը, գիշերով անկարելի էր հասնել այն լեռը, որը նախապէս որոշուած էր իբրև կայան:

Առաջնորդների խորհրդով և խմբապետ Վայծակի կարգադրութեամբ՝ խումբը լուսաբացին բարձրացաւ Խորում և Զիվին գիւղերի մէջտեղը գտնուող պատմական հին բերդի փլատակները և երեք մասի բաժանւած՝ բռնեց ստորոտի և գագաթի դիրքերը: Մի մասը, 13 հոգով, Խաչիկի տասնապետութեամբ գտնուում էր գագաթի դիրքում, իսկ ներքեւի դիրքերում տեղաւորւած էին մեր 16 ընկերները, որոնց պաշտպանութեանն էին թողնւած ձիաները, վրայի բոլոր ուղղամտներով: Այդ ուղղամտները մեզ հետ, վերևում, ունէինք միայն վեց հատ ուռմը և մեր վրայի փամփուշտներն ու հրանոսորձանակները:

Լուսաբացին, լեռան շուրջը գտնուող հովիւները նրկատեցին մեզ և հաւար ձգեցին մօտակայ քրդական գիւղերը: Առաւօտեան ժամը 5-ից սկսած՝ հարկւրների զինւած քրդեր հաւաքեցան մեր շուրջը և մեր

հանդիպակաց դիրքերը բռնելով ժամը 6-ից սկսեց կռիւր: Մինչև կէսօրայ ժամը 12-ը մօտաւորապէս երկու հազար քուրդ ու թիւրք զինուորներ էին հաւաքւել արդէն մեր շուրջը, բայց և այնպէս չէին յանդգնում առաջ շարժել: Կրակում էին այնքան հեռուից, որ զինդակները նոյնիսկ չէին հասնում մեր դիրքերին: Մեր խմբապետը շարունակ մի դիրքից միւսը անցնելով, սիրտ էր տալիս տղայոց: Ժամը 12-ից յետոյ զօրքերի և խուժանի թիւր կրկնապատկեց. սիրտ առած՝ նրանք հետզհետէ մօտեցան մեզ և կռիւր ստեղծացաւ: Այդ ժամանակ խմբապետը մեր դիրքում էր և այլևս անկարելի էր միւս դիրքերը անցնել: Թշնամին կարկտի պէս գնդակ էր թափում: Բայց մենք առանց զոհ տալու՝ կոււում էինք և կանգնեցնում թշնամու առաջ ընթանալը: Ժամը 1-ն էր, երբ առաջին անգամ քրդերը մեծ բազմութեամբ միաժամանակ դուրս թռան իրենց դիրքերից և վազեցին դէպի մեզ: Մենք խմբապետի և տասնապետ Խաչիկի — Նախի (Միբայէլ ժամակոչեան, ակնեցի) կարգադրութեամբ՝ մեր հրացանների միահամուռ որոտով գետին տապալեցինք յարձակողների առաջին շարքերից մի քանի տասնեակ հոգի և մնացեալները յետ փախչելով՝ նորից մտան քարերի ու բլուրների ետևը:

Նկատելի էր, որ թշնամու բանակում մեծ իրարանցում էր տիրում. ըստ երևոյթին, մեր մօսիները նրանց մէջ առատ հունձ էին անում: Այս ժամ անցած՝ քիւրդ ու թիւրք զօրքերը միատեղ, նորից գոռոււմ-գոչիւններով, մեծ բազմութեամբ դուրս թռան իրենց դիրքերից և խիզախորէն նետեցին դէպի մեզ: Այս անգամ էլ մեր միահամուռ կրակը յետ մղեց թշնամու բազմութիւնը:

Նոյն միջոցին ներքեւի դիրքերում գտնւած մեր ընկերները կատաղութեամբ կոււում էին քիւրդ ու տաճիկների մի այլ բազմութեան դէմ, որոնք նոյնպէս իրանց անաչօղ յարձակումներով, բացի զոհեր տալուց, ուրիշ ոչ մի նպատակի չէին հասնում: Մեր ոգևորութիւնը անասհաման էր: Կու իրար խրախուսելով շարունակում էինք կռիւր, երբ յանկարծ նկատեցինք, որ քրդերի մի բազմութիւն, հեռաւոր քարափների տակից սողալով, բաւական մօտեցել է մեզ: Հասնապետ Խաչիկի նետած երկու ուռմերը և մեր գնդակների տարափը բազմաթիւ դիակներ փռեցին գետին, իսկ մնացածները քարափից ցած թափւելով՝ փախուստի դիմեցին:

Այս օրից յետոյ ժամը 6-ն էր, երբ սուսար բազմութեամբ, նորից նոյն քարափների ետևով՝ յարձակում գործեցին մեզ վրայ: Այս անգամ էլ մեր նետած չորս ուռմերը և մօսիների շեշտակի գնդակները աւելի մեծ հարուած տւին թշնամուն: Եւ երբ նա սարսափած, փախուստ էր տալիս մեզից 60-70 քայլ հեռաւորութեան վրայ, մենք անկարող եղանք զսպել մեր ոգևորութիւնը, միատեղ դուրս թռանք ամուր դիրքերից և տորձանակներով ու դաշոյններով հասանք փախչողների ետևից: Ներով ու դաշոյններով՝ անխնայ գլորում էինք մեր դիակների վրայից անցնելով՝ անխնայ գլորում էինք մեր ձեռքն անցնողին... Բայց յանկարծ նկատեցինք, որ 3-4 ձեռքն անցնողին... Բայց յանկարծ նկատեցինք, որ 3-4 հարկւր տաճիկ զինուորներ, աջ թեւից հասել էին մեր թողած դիրքերին: Այդտեղ ամբացած՝ նրանք մեր ետևից սկսեցին կարկտի պէս գնդակ թափել: Պատկերը փոխեց: Երեք կողմից շրջապատուած էինք զօրք ու քիւրդերով: Երանց գնդակներից ընկան տասնապետ ԽԱԶԻՎԸ ԵՂԻՍԱՆՆԻՍՅԱՆԻ, ԵՂԻՍԱՆՆԻՍՅԱՆԻ, մշեցի ԳԵՆՈՒՆ, արքայանորթուհի ԱՐԱՄԸ:

և ԽԱՉՕՆ. իսկ մենք 6 հոգով, խմբապետի կարգադրութեամբ, կուսելով յետ նահանջեցինք դէպի ներքեւի դիրքերը: Այդ միջոցին երկու ոտքից վերաւորելով՝ ընկաւ մեր քաջ խմբապետը, «Տղայք, կուսեցէք և լուծեցէք մեր ընկերներու վրէժք», գոչելով: Նոյն ժամուն ընկաւ նոյնպէս զինուոր ՎԱՀԱՆԸ (Ազեզ) մշեցի ԲԱՂԴԱՍԱՐԸ, ալէքսանդրոպոլի ԱՐՇԱԿՆ ու ՄԱՏԹԷՈՍԸ, իսկ ես թիթեւ վերաւորելով, գանձակեցի Յակովբի հետ իջայ վարի դիրքերը:

Վարի դիրքերում մեր 16 ընկերները գնդակահարել էին իրենց ձիերի մեծ մասը, իսկ իրենք իջել դիրքերից աւելի ներքեւ դէպի ձորը և կուսելով առաջ էին գնացել առանց մի դիակ թողնելու դիրքերում: Թէ այդ 16 ընկերներից ո՞վքեր էին սպանուել և ո՞վքեր ազատուել, անհնար էր իմանալ, որովհետև մինչև արևի մայր մտնելը, դեռ ևս ձորից լուսում էին հրացանաձգութեան ձայներ: Գանձակեցի Յակովբը, որ ինձ հետ էր, չուզեցնելով քարերի ետև դիրք բռնած կուսել, հրացանը ձեռքին առաջացաւ քրդերի վայ և դարանամուտ քրդերից բռնեց: Իսկ ես մենակ մնացած, շարունակեցի կուսել: Քրդերը գոռում էին, որ անձնատուր լինեմ, բայց մի՞թէ ֆէզայու համար գոյութիւն ունի «անձնատուր լինել» բառը:

Այդ ծանր րոպէին մի միտք յղացաւ իմ գլխում:— հողի մէջ ծածկեցի երկու ուռմբ, վրան հաւաքեցի այդ դիրքում մնացած խուրջիներն փամփուշտներն ու ուրիշ մթերքները և հրացանս բարձրացնելով կանչեցի քրդերին, որ եթէ չսփեմ, անձնատուր կը լինեմ, աւելացնելով որ գան հրացանս առնեն: Յիսուսի չափ քրդեր ուրախ ու համարձակ դիմեցին դէպի ինձ: Ես վառեցի ուռմբերի երկար պատրոյգը և գաղտուկ վազեցի հետուն գտնող քարի ետև թաքնեցայ: Քրդերը հասան ուղղամթերքին և մինչդեռ իրար հետ կուսելով խուրջիները իրար ձեռքից քաշքշում էին, ուռմբերը պայթեցին և փոշին, ծուխն ու մարդկանց դիակները իրար խառնեցին...

Այդ իրարանցումից օգուտ քաղելով աւելի հեռացայ և մի փոսի մէջ հրացանը ձեռքս, մառուգէր ատրճանակ մօտս՝ պատրաստ սպասում էի թշնամու խուզարկուներին: Ոչ որ չեկաւ ինձ մօտ և ես թէև այդ կողմերին անծանօթ, սակայն սահմանի լեռներին նայելով երկու գիշեր մենակ ճանապարհ շարունակելով, մի հրաշքով կարողացայ անվնաս, զինուած անցնել սահմանը: Մեր շուրջը և դիրքերի վրայ փուլած թշնամու դիակների ու վիրաւորների թիւը բաւական մեծ էր. ինձ թուում է, մինչև 4-5 հարիւր: Սահմանագլխում լսեցի, որ խմբի այլոց սպանուել են մի բինբաշի (Քեօթակի), 2-3 իւզբաշի և 2-3 միւլազիս:

Արդեօք ուրիշ տղաներ էլ ուէ հրաշքով ազատուած են թէ ոչ, առայժմ յայտնի չէ: Պէտք է նկատել, սակայն, որ ներքեւի դիրքերում գտնուած 16 ընկերների մէջ կային 2-3 բասենցի լաւ վալատներ և քանի որ նրանք դիրքերում ոչ մի դիակ չթողած մտել էին ձորը և այնտեղ կուսել, հաւանական է, որ նրանցից ազատուող և Բասենի հայ գիւղերը գնացողներ լինեն: Սահմանը անցնելուց յետոյ, լսեցի, որ մի բասենցի վալատ էլ կուսի ժամանակ թիփերի տակ թաքնուելով գարձեալ հրաշքով ազատուել և անցել է Կովկաս:

Սահմանագլխի ուռու պաշտօնեաները հեռագրով յայտնուել են Կարսի նահանգապետին և վերջինս էլ կառա-

վարչապետին՝ «Դժուր» խմբի ընդհարման մասին, աւելացնելով, որ դրանք Անդրանիկի խմբից են և Մուշի դաշտում կուսուց յետոյ՝ ուղեցել են անցնել Ռուսաստան-Կովկաս: Այդ «մանկական» զառանցանքի վրայ հիմնուած՝ իշխան Գօրիցին կարգադրել է կրկնապատկել խստութիւնները, որպէս զի խուրջութիւնը չ'անցնի դէպի Կովկաս:

ՍԱՍՈՒՆԻ ԴԵՊՔԵՐԸ

Մուշ, 15 մայիս

Յեղափոխական խմբերու անձուէր դիմագրութեան լուրերը արդէն ուղարկուած են ձեզ Գլխիկոր՝ հայդուկներու քարութեան առջև՝ թիւրքաց զօրքը և քիւրդ արիւնսարբու հրոսակները իրենց զէնքերը գարձուցին անմասն ու անզէն ժողովրդի, մինչև իսկ երեխայոց և կանանց վրայ:

Լեռնէն ստացուած տեղեկութիւնները դառն կերպով կը նկարագրեն բռնութիւնները, որոնց զոհ են Սասունի անպաշտպան կիներն ու երեխաները:

Նախ ըսենք որ, Սասնոյ մէջ 45 հայաբնակ գիւղեր այրուել, քանդուել ու փճացել են: Ահա այդ գիւղերը՝ Կէլիէկուզան իր վեց թաղով, Մխիթար, Հէսեյնիկ, Ղարիպշահ, Գահոյ, Մերկեր, Խաչաք, Կրահար, Ալիանք, Հրմօրի գոմ, որոնց բնակիչներու թիւը 1,800-էն աւելի է: Աճալ և Հէնքը — 2,130 բնակիչ: Աղբի, Գեղաշէն, Շուշնամերկ — 1415 բնակիչ: Բօբ, Տաբըզ, Երիցունք, Կեարմաւ — 1,175 բնակիչ: Հիթենք, Խոճոճվանք, Խտան, Կէլիէմսուր 875 բնակիչ: Հեղին, Իշինձոր, Սարթ, Ընկուզիկ, Արտիոնք, Կէլիէկէնրման — 1,860 բնակիչ: Տալ-Լորիկ, Էգուտուն, Փուրիս, Հագմանք — 1,030 բնակիչ: Թուահիք, Խըլհոյխ, Հլոդենք, Արգիւտ և Միգրէ — 850 բնակիչ: Հոսուտ, Բորիսու, Սպաղանք, Եղկարտ 650 բնակիչ: Յարգի, Չորեր, Բարավանք և ըն 850 բնակիչ: Գուճար 12,650 բնակիչ:

Այդքան բնակիչներէն առայժմ ազատուած կ'երևան միայն 5,500 կիներ, երեխաներ և ծերեր ու կարգ մը վիրաւորներ, որոնք հալածական Մուշ հասեր են: Մաս մ'ալ փախստական են և զանազան տեղեր ապաստանած կը մնան: Մնացեալները մօտ 2,500 հոգի զոհ են գնացել սուլթանական բռնի հրամանին:

Ամենէն սոսկալի բռնութիւնները տեղի են ունեցել Կէլիէկուզանի գրաւումէն վերջ՝ Տալ-որիկի, Կրաշէկի և Կէփիի մէջ: Այդ կողմերը ապաստանած և ամրացած հայերը՝ որոնք հետներին ունէին իրենց կանայք և երեխաները, չորս կողմէն պաշարուելով՝ յարձակումներու ենթարկուեցին: Բռնութիւններ կատարողներն էին Կէլի և Խըտոնի վրայէն Մուշէն մեկնած զօրքերու վեց վաշտերը, և անոնց հետ 2,000 քրդեր՝ Բասնց գաւառի և Իշլընձորի կողմէն. Դիարպէքիի ութ վաշտ զօրքերը և միւս կողմէն ալ՝ զելանցի շէյխ ԱՏմէդը (զելանցի շէյխ Մահմէդի տղան, որ 1894-ին Սասունի մէջ յայտնի եղաւ իր արիւնսարբու գործերով) 5000-ի չափ սասունցի, ջալալցի, բագրանցի, շէյխ-գուրանցի, պատըղանցի, ուշթութանցի աշիրեթներով: Այժմ այդ նոյն բարբարոսը Մուշ է եկած վալիի օգնականի հետ Սասունի 45 գիւղերու հողերը ստանալու պայմանները կնքելու նպատակով: Եւ արդէն քրդերը սկսել են զետեղել հայ գիւղերու աւերակներու մէջ:

Տալուորիկի մէջ զօրքերն ու քրդերը շատ զօրեղ դիմադրութիւն կը գտնեն և երբ կը տկարանան հայ քաջերու դիմաց՝ թնդանօթի ուժին կը դիմեն: Ամբողջ ութ օր, օրական 150-1200 ուռմբներ կը թափեն հայերու վրայ: Եւ չկարողանալով քաջերին փնասել, կիներ, երեսաներ կը ջարդեն՝ խաբէութեամբ ընտանիքներու մի մասը գետ կ'իջեցնեն, մանր տղոց սրախողկոտ ընելէ յետոյ գետը կը լեցնեն, ստորաբար կիները կը բռնաբարեն: Տասներկու հերոսուհիներ, իրենց պատիւը փրկելու համար՝ իրենց երեսաները գրկած՝ ինքզինքնին ահագին բարձրութեան ջուրը կը ձգեն. նոյնպէս մի քանի շէնքքցի քաջեր նեղ դրութեան մէջ՝ գահավէժ կ'ըլլան: Անհոգի և լրբացած զինուորներն անգամ կը զարմանան սասունցի կանանց քաջութեան ու պատուասիրութեան վրայ:

Ինչպէս արդէն գրեած է, ապրիլ 27-էն մինչև օրս Սասնոյ մէջ կռիւր կը շարունակուի: Չը նայելով որ 30,000-է աւելի զօրք և քրդեր կը մասնակցէին Սասունի պաշարման՝ թշնամին ահագին կորուստներ ունեցեր է, ու իր հին սովորութեամբ՝ վրէժը լուծեր է միշտ անպաշտպան կիներէն ու երեխաներէն: Մինչև այսօր ալ Սասնոյ ձորերու, անառններու և քարայրներու մէջ մարդիկ կան պահած, զօրս անդադար կը հետազօտեն թիւրքական գունդերը և ուր որ գտնեն մի անգէն, անմիջապէս գնդակի կը բռնեն, իսկ զինուորներէն երկչտաբար կը փախչին:

Մայիս 14-ին Տալուորիկի և Վէլիի միջև մի մեծ կռիւ տեղի ունեցաւ և մինչև այսօր կը շարունակուի: Երկու հարիւրի չափ զինուած քաջեր, հաւաքելով իրենց ժողով անպաշտպան մնացածներուն, տասն օրուան չափ կը պահեն, ամեն մէկին օրական մի բուռ կորեկի ալիւր տալով: Տարաբախտաբար ուտելիքի պակասութիւնը կը ստիպէ դիրքերէն դուրս գալ, երբ ալիւրը կը հատնի, Տալուորիկի գետին վրայ փայտէ կամուրջ մը կը պատրաստեն և երբ 300 ընտանիքներ կեսը դէպի Մուշ կ'անցնի, անմիջապէս կը պաշարուի զօրքերէ և քրդերէ: Թնդանօթը կ'ուղղեն երեսաններու և կանանց բազմութեան վրայ... Թիւրքաց կորուստն ևս մեծ է, իրենց տկարութիւնը զգալով մի թապուր զօրք ևս Մուշէն օգնութեան կ'ուղարկեն:

Այդ ընտանիքներէն միայն 40-50 հոգի վերաւորներ հասան Մուշ: Վերաւորեալներու մէջ կան տապաւրի, սուխի և դաշոյնի հարւածներ կրողներ: Երկու հիւպատոսները անձամբ այցելեցին անոնց: Քաղաք եկածներուն արգելած է հայերուն հետ հաղորդակցութիւն ունենալ: Մերկ, անօթի, խոնաւ գետնի վրայ, հիւանդ և վերաւոր դրութեան մէջ կը մնան, այնպէս որ օրական 4-5 մեռած կը հանեն այդ «բանտէն»: Ուրախ եմ ըսելու, որ Մշոյ երիտասարդութիւնը և հասարակ ժողովուրդը իրենց բերանի պատառէն իսկ անոնց բաժին կը հասցնեն՝ չնայած շատ խիստ արգելքներուն: Եթէ այդ փոքր օգնութիւնն չլինէր, այժմ շատերը գերեզմանի մէջ կը լինէին:

Օգնութեան կարիք կայ:

Իսկ դաշտի մէջ, չաւատորիկի և Բերդակի դէպքէն վերջ քանի մը հեծեալ ջան պէ՛զարն եր և զօրքեր կը մտնեն Մկրագոմ գիւղը. անոնց դիմաց կ'ելնէ գիւղի իշխաններէն Բօզէեան Միսօն և կը հարցնէ՝ «հոս կ'ուղչք իջնել թէ կ'անցնք»: Կ'ըսեն՝ «պիտի իջնենք»: Ես ալ

կըշտապէ անոնց տեղ պատրաստելու: Յանկարծ կրակ կը բացուի, ինն ձի կը զարնուի, զօրքեր և թիւրքեր դարան կը մտնեն գետի ափը և կըշտապեն օգնութեան կանչելու: Նոյն ժամուռն, 15 ըրպէ հեռի եղող խառնուղէն մի վաշտ զօրք օգնութեան կը հասնի: Միւս կողմէն ալ երբ գիւղի բնակիչները ահագին ուժի դիմաց յետ կը քաշին, քրդեր մեծ բազմութեամբ անոնց առջև կը կտրեն և կրակ կուտան: Դէպքը պատահած ըրպէին այդ գիւղէն երկու փոքր տղայ ձի նստած՝ մտակայ գիւղեր լուր կը հաղորդեն: Նոյն ժամուռն Չարեգլթոցի քանի մը զինեալ քաջեր կը հասնին և քրդերու վրայ յարձակելով փախչողներուն կ'աղատեն: Կռիւր կըսկսի առաւօտեան ժամը ութին և կը տևէ մինչև գիշերուայ ժամը երկու: Երբ դիմադրող գիւղացիք և տղայք կը հեռանան, գիւղը կ'այրեն ու բոլորը թալանի կուտան:

Մուսա բէկի եղբայր Ղասըմ բէկ ևս, որ նոյնպէս լեռնէն վար իջած էր 200 զինեալներով այդ գիւղին վրայ կ'երթայ ցորեկ տտեն: Տաւարը և ոչխարը դաշտէն կը տանեն: Օտար քրդեր ցորեններ հորերը չգիտնալով միայն յայտնի եղածները տարեր են:

Քրդերը ցուցմունք տւած են (քաղաքական մարմինն ալ վարձած են այդ արիւնարբուները) թէ գիւղը քահանան եղած է այդ խռովութեան պատճառը, յեղափոխականներու հետ շփում ունենալով: Քրդական ամբաստանութիւնով կառավարութիւնը կ'ուղչէ աւելի հեռու մղել իր աւերածները:

Նոյն գիւղի վիճակին արժանացան՝ Արիգլթն, Դրմբոս և Չարիփոս գիւղերը: Այժմ գիւղերը ամայի, բնակիչներ ցրած, կենդանի մնացածներ այս և այն կողմ կը մուրան, մի մասն ալ բանտարկեալ: Երկու օր առաջ ջիպրանցի Շապօ անուն քուրդը Տէրբէ (Աշտիշատ) գիւղի վրայ յարձակում գործեց:

Կուսակալը բոլոր գիւղերու ղեկները քաղաք բերած է և շնորհակալութեան հանրագիր ստորագրել կը պահանջէ: Ինչ դիրք բռնեցին առաջնորդներն և քաղաքական ժողովի անդամները:—Բիթլիզի Եզնիկ և Մշոյ Գնէլ վարդապետները, համամիտ իրենց նման անարժան կակոսեան խաչիկին, բիթլիզցի Բէնտէրեան Գրիգորի, Մարտիրոս Մահակեանի և մշեցի Նազարեթ Բէշլիշեանի հետ՝ կուսակալի բոլոր պահանջներուն գոհացում կուտան և մինչև իսկ կըստորագրեն այն հանրագիրը, թէ «Յեղափոխականները 30 օր դիմադրելէ յետոյ փախան՝ իրենց ունեցածը թողլով»:

Երկիւղ կրելով հիւպատոսական քննութիւնէն, կուսակալը ամեն ջանք գործ կը զնէ բռնութիւններու հետաքերը ջնջելու: Դիակները ջուրն են ածել տւել: Նոյնպէս քանդած են Սասունի մէջ շատ գերեզմաններ, որպէս զի հիւպատոսական քննութեան ժամանակ մեծ քանակութիւն չ'երևին:

Հիւպատոսները տակաւին գործնական քայլ չեն առած: Խուսիոյ դեսպանին և թիւրք փաշաներու գալստեան կը սպասեն:

Յեղափոխականները տակաւին Սասնոյ լեռների մէջ պահած են: Լուր կայ, որ խմբապետ Ղահան քանի մը օրէն տեղս հասնի:

Լեռ մնացեր է չորս վաշտ զօրք և չորս թնդանօթ: Նոր լուրեր կը հասնին, որ ֆէդայիներու օգնական խմբեր կուգան դէպի Տարօնի դաշտը: Մանրամասներ դեռ չկան:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԻՏԻՆԳՐ

Յունիս 29-ին Լոնդոնի մէջ գումարւած Հայաստանի միտինգը պէտք է համարել մի բերկրալի նախանշան ան ցանկալի համերաշխութեան, որ ստեղծուած է Ֆրանսիական, անգլիական ու իտալական հասարակութեան և կառավարչական շջջանների մէջ՝ յօգուտ հայկական և մակեդոնական խնդիրների:

Դաշնակցութեան ջանքերը ի մի գումարելու երեք երկրների կարևոր գործողներին արևելքի տանջող ժողովուրդների հարցի շուրջը, — կարելի է համարել աջողութեամբ պսակւած: Ժողովը ցոյց տւեց օրինակելի ներդաշնակութիւն, թէ բ ո ղ ո ք ի կողմից, ուղղած օսմանեան կառավարութեան հասցէին և թէ պահանջի տեսակէտից, դրած եւրօպական դիպլոմատիայի առջև:

Նիստի սկզբում անգլո-հայկական ընկերութեան նախագահ Սեթրնսոն կարդաց զանազան կողմերից ստացւած համակրական նամակները, որոնց թւում Անատոլ Ֆրանսի, Ժան Ժորէսի և Ժորժ Ալէմանսոյի գրութիւնները, ներշնչւած ջերմ զգացմունքներով: Ապա Ջեմս Բրայս՝ ժողովի նախագահը, արտասանեց մի յափշտակւած ձառ, ներկած Թիւրքիայի քրիստոնեաների սոսկալի վիճակին և վերջացրեց՝ հրաւեր կարդալով արևմտեան եւրօպայի քաղաքակիրթ ազգերին՝ կատարել իրենց մարդասիրական պարտաւորութիւնը դէպի ճնշւածները: Ծանօթ հայաստանի խօսքերը ընդունեցին միահամուռ համակրանքով և բուռն ծափերով:

Ժողովը ընդունեց երեք որոշում: Առաջին որոշման ներկայացուցիչն էր մեր յարգելի բարեկամ Ֆրանսիս դը Պրէսանսէ, որը արտասանեց մի գեղեցիկ ձառ, իրեն յատուկ հմտութեամբ: Այդ որոշման աջակցեցին Ջոն Ալենսփէյ, Բօչչեստրի եպիսկոպոս, Մաձձինի, լորդ Ստենօր, Գուրտըն, պրօֆէսօր Հարրիս, Կոնէր Պօլուէր, Հեօգ Լօ: Ահա որոշումը. —

Ժողովը յայտնելով իր ուրախութիւնը այն սրտողին համաձայնութեան համար, որ բարեբախտաբար դայութիւն ունի Ֆրանսիական, իտալական և բրիտանական ազգերի միջև, խորհրդով հաստատում է այն իրողութիւնը, որ Թիւրքական կառավարութիւնը ցաւալի կերպով թերացել է դորադելու եւրօպական և ասիական նահանգների մէջ բերլինի դաշնադրութեան 23 և 61-րդ յօդ.ածներով ընդունւած վարչական բարենորոգումները: Ժողովը յանձնարարում է Պարիզի, Հոսթմի և Լոնդոնի կաթիլներին՝ ստիպուաբար արդու միջոցներ ձեռք առնել հաստատելու համար Թիւրքական կայսրութեան բոլոր նահանգներում մի արդար և մարդկային վարչութիւն:

Երկրորդ որոշման առաջարկողներն եղան Հերթօրտի եպիսկոպոսը և Պիէռ Բիաու, որոնց աջակցեցին Հեյդեր, Իօքսոյ պրօֆէսօր Ջոն Ալէսայէյկ և Մակ Կոլը նա կազմւած է այսպէս՝

Այս ժողովը վստահ լինելով, որ Բ. Գրան ուղղւած դիպլոմատիական յանդիմանութիւնները ապարդիւն են, հրաւիրում է բոլոր ազատ ժողովուրդներին՝ մասնակցելու Թիւրք կառավարութեան ներկայ անտանելի ընթացի գոհներին արատագրութեան դործին, առանց խորութեան ցեղի և կրօնի, և յայտարարում է, որ ինքը ժողովը որոշել է անել այն ամէնը, ինչ որ կարող է աջակցելու համար այս գործը, շարունակելով մղել սահմանադրական պայքարը Ֆրանսիական, իտալական և անգլիական պարլամենտներում:

Երրորդ որոշումը առաջարկեց սենատօր Գելպէշ, որին երկրորդեցին Շարլ Շվանն, Հօպվուտ, Ժան Լօնգէ, Բեկկէտ, Բեժօնեգ և Ալիլարի: Որոշումը հետևեալն է.

Ներկայ ժողովը հաստատելով այն շարակամութիւնը, որ

սուլթանը առաջ է բերում իր հպատակների վեճակ բարելաւելու ամէն մի դրական միջոց առաջարկած ժամանակ, յայտարարում է, որ հասել է բոլորին, երբ մեծ պետութիւնները պէտք է պնդեն՝ մայրեցու անհրաժեշտ փոփոխութիւնները սամանեան կայսրութեան կազմի ու վարչութեան մէջ ապահովելու օրէնքի ու կարգի պահպանութիւնը, յանուն արդարեանութեան բոլոր խաւերի շահերի:

Ժողովի մանրամասն արձանագրութիւնները պատրաստւած են և շուտով լոյս կը տեսնեն Լոնդոնում, անգլիերէն լեզուով: Իսկ «Պրօ Արմէնիայ» խմբագրութիւնը պատրաստում է մի բացառիկ համար, ներած ժողովի մանրամասներին:

Հ Ա Յ Ա Ս Տ Ա Ն Ի Վ Ի Ճ Ա Կ Ը

ԲՈՒՆՈՒԹԻՒՆՆԵՐԸ ՄԵՈՑ ԴԱՅՏԻՆ ՄԵՋ

7 յունիս

Մ ա յ ի ս 31. — Բիթլիզի ոստիկանապետ Իդէթ պէյ, իր հետ ունենալով 200-ի չափ ոստիկան և ժանդարմ ձիաւորներ, երեկոյեան ժամը 9-ին կը պաշարէ դարձեալ Գոմեր գիւղը՝ Մշոյ գաշտին մէջ: Կէս ժամ վերջ՝ պաշարման կը մասնակցին 450 զինուորներ ալ՝ մօտակա կայանքներէն՝ Զրիկէն, Խըլըլաղաձէն և Ս. Յովհաննու վանքէն: Կը հասնին նաև արմանցի, պատրկանցի աշիւթները և անմիջապէս գիւղը հրացանաձգութեան կ'ենթարկուի:

Թիւրքերը լուր տարածեցին թէ, հոն կը գտնուէր Անդրանիկը իր խմբով: Թիւրքերի առաջին յարձակումը յետ կը մղէի զօրեղ դիմադրութեամբ: Այդ միջոցին գիւղացիներէն կրպայանուի Խ ի Ր օ Մ կ Ր օ յ ե ա ն անուն անձը: Ժողովուրդը վտանգը նախատեսելով՝ կը փախչի բարեբախտաբար կիներ ու երեխաներ ծառախիտ ձորակէ մը կը յաղղին գիրենք դաշտի գիւղերը ձգել իսկ սղամարդիկ կը դիմեն դէպի լեռը ու նոյն միջոցին անգնէ գիւղացիներէն կրպայանուին՝ Ծերունի աէս Ս ա Ր դ ի ս ը որդին Մ ու Ր դ է ն, եղբայրը Տ օ ն է ն, Պեարոսի կին Խ զ ա մ, Տ. Խաչատուրի եղբայր Օ հ ա ն, անոր երեք ամեայ որդին Խ օ ս Ր օ վ: Ասոնց դիակները երկար ատեն արևի առջև կը մնան. կէս դիշերի մօտ՝ զօրքեր ու քիւրդեր գիւղը կը խուժեն: Առաջին թարանէն մնացածները դարձեալ կը յափշտակւին և բոլոր տաւարն ու ոչխարը աւարի կ'առնին, տները կը վաւուին և գիւղը ամայի կը մնայ:

Յ ու ն ի ս 1. — Ոստիկանապետը կ'արշաւէ Գոմերէն վեր Տասրազում անուն գիւղին վրայ: Գիւղը բոլորովին կը կողոպուտի և բնակիչները կը փախչին և փախչողները բոլորն ալ անգնէ երիտասարդներ, Սրբ. Յովհաննու վանքին պարսպին ներքև զօրքերէ կրպայանուին: Ասոնց անուններն են՝ Մ Ր կ է Թ ա մ օ յ ե ա ն, Խ ա չ ի կ Մ ա վ օ յ ե ա ն, Ս տ ե փ ա ն Օ ու է ե ա ն:

Երկու ժամ վերջ Թիւրքերը բազմութեամբ կ'իջնեն Պէէլ գիւղ. որուն հայ բնակիչները փախած էին: Գիւղը ամբողջ աներով կը կողոպուտի և բոլոր կենդանիները աւարի կը տրուի: Նոյն օրը, ժամը 6-ին, Գոմերի Ֆրգակայ խոտրոնք գիւղին մէջ Պոնձի անուն քիւրդը, 5 ընկերներով կը վերաւորէ շէնքի Կուրձօն և կրպայանէ շէնքի ծերուկ աէս Ղ ա զ ա Ր ը, որու մարմինը տապարով կը յօշոտուի: Այս երկուքը սասունցի են և կոտարածէն վերջ՝ դաշտին մէջ ապաստանած էին:

Փողոկովի մէջ Բ ա շ օ անուն հայր, ժամը 7-ին, իր տան մէջ կրսպաննւի փողոկովցի ըսւած պէյերէն:

Յ ու ն ի ս 2.—Ախճանցի Յ ու ն ան Խ ան դ ե ի և ան անուն հայր նոյն գիւղին մօտ, արտերուն մէջ, կրսպաննւի երեկոյան ժամը 5-ին սէրտանցի քիւրդերէն:

Յ ու ն ի ս 3.—Առաղի գիւղացիները պատրկանցի և տմկնցի ըսւած քիւրդերու չարիքներէն զերենք ազատելու համար՝ Մուշ եկած և բողոք մատուցել են: Երբոր քաղաքէն իրենց գիւղը կը վերադառնան, քրդաբնակ Մեզգէ գիւղէն անցած ատեն՝ իրիկան ժամը 11 $\frac{1}{2}$ -ին Առաղի միւտիրի և պատրկանցի քրդերու կողմէ յարձակում կը կրեն. այդ միջոցին կրսպաննւին գիւղապետ Յ ա կ ո բ, Մ խ ո յ ե ան Գ ր օ ն. խկ Ղ ու կ է և Արտակեան Օ Տ ան անուն անձերն ալ կը վերաւորւին ու կը կողոպտւին:

Յ ու ն ի ս 5.—Սասնոյ կոտորածէն ազատուող գեղաչէնցի Խ ու ը շ ու և Տ օ ն է Ղ ո յ ի անները Գ ե ղ ա շ է ն ի անտառին մէջ իրենց վերաւոր ազգականը փնտռելու գացած ատեն՝ տակաւին գիւղ չհասած՝ ցորեկ ժամը 8-ին տափըզցի Տինգ քիւրդերէ կրսպաննւին և իրենց դիակները կը յօշոտւին:

Յ ու ն ի ս 6.—Առաւօտ ժամը 2-ին, ծանօթ ոստիկանապետը իր հետ ունենալով 120 ձիււոր ոստիկաններ, վաշտ մը զօրք և բազմաթիւ զինեալ թիւրքեր ու քըւրդեր՝ կը յարձակի Մուշէն մէկ ժամ հեռաւորութեամբ Դ ե բ բ է վանք գիւղին վրայ, պատրակելով թէ հոն Փ է դ ա յ ի կայ: Անմիջապէս գիւղը պաշարելով՝ կրակի տակ կ'առնուի: Դ ե բ բ է վանքի մէջ ոչ միայն գիւղի բնակչու թիւնը կար, այլ նաև հոն լեցելը էին մօտակայ անբնակ դարձած Առաղ և Բ ե բ գ ա կ գիւղերու բնակիչներն ալ: Անընդհատ հրացանաձգութեան և գիւղին պաշարուած ըլլալուն վրայ ժողովուրդը շարած՝ կրսպի փախչելու բայց անցք չի գտնուիր և դարձեալ գիւղի տներուն մէջ կ'ապաստանի: Ահա այդ ատենէն զօրքը, թիւրքերը և ոստիկանները կրսպին իրենց բռնութիւնները. ձեռք անցուցած անգէն և անպաշտպան հայերը կը կոտորեն գընդակով, սուրով ու սուխնով: Բարբախտաբար անգլիական և Ֆրանսական հիւպատոսները շուտով հասած, հոն կը հասնի նաև նոյն միջոցին Աւստի անգլիական հիւպատոսը, որ Աւստի Մուշ կուգար, ապա թէ ոչ աղէտը աւելի և աւելի քստմնելի պիտի ըլլար:

Ահաւասիկ Դ ե բ բ է վանքի մէջ, ինչպէս գիւղին մօտերը արտերու և մարգերու մէջ սպաննուած ու վերաւոր հայերուն անունները:

Արգօ և Մեւորոք Պօղոսեան՝ երկու եղբայրներ, Պլոտօ Խաչիկեան սպաննուած. Գրիգոր Նշոյեան վերաւոր. Պետրոս Արթինեան, Շահնազար և Արշակ Շաթօյեան եղբայրներ, Մխիկ Գրգէեան, Գեորգ Սարգիսեան, Մարտիրոս Մկրտիչեան, Եղիկ Պօղոսեան՝ սպաննուած. Խաչիկ Յովհաննէսեան վերաւոր (ասոնք դիւրբէվանքիներ են), Մուրադ Արթինեան՝ ալիզուլուցի, Մխիկ Կուրյեան, Մուշեղ Քարօյեան՝ սպաննուած. Իկիթ Պետրոսեան՝ վերաւոր. ՕՏան Շահինեան, Կոբէ Մեքօրեան սպաննուած: Այս վերջիները առաջիներ են:

Կ'ըսուի թէ հիւպատոսները կծու դիտողութիւններ ուղղել են տեղոյս կառավարութեան՝ այսքան անմեղ մարդոց տարաբախտ սպաննութեան համար:

Գ Ա Ր Ա Ք Ի Լ Ի Ս Է, 21 մարտ

Տաճիկները կազմակերպել են ե ն ի չ ե բ ի ա կ ան մի նոր խումբ, որի կենտրոնը լինելու է Կարին: Դա էլ ասոււմ են, արդի ստորազամի ստեղծագործութիւնն է: Նոր ենիչերիական ա լ ա յ ն (վաշտը) բաղկացած է 600 հոգուց, բողոքն էլ փախստական ու դատապարտուած աւազակ թիւրքեր, թաթարներ, չէրքէզներ ու քուրդեր են, որ պատանշաններով ու ոռճիկներով վարձատրուած՝ մտնում են այդ խմբի նւիրական դրօշի տակ — որին ջ ա ն բ է Ղ ա Ր (Կեանքից ձանձրացած) անուն են տալիս: Մինչև այժմ գրանցեց ոմանք գտնոււմ էին Մուշի ու Բիթլիզի շրջանում, բայց այժմ արդէն կանոնաւորուած ու կազմակերպուած են, ազատ էլ ու մուտք պիտի ունենան այս ու այն կողմը, պիտի թափառին ամեն տեղ և անձնւիրաբար նպաստեն կառավարութեան շահատակութիւններին, պիտի հսկեն հայոց յեղափոխական շարժումներին, հարցաքննեն ու պատժեն ինչպէս իրանք են ցանկանում. նոքա յանձն են առել և պատրաստութիւններ են տեսնում արշաւելու ապրատամբ Սասունի վրայ, նրան իսպառ ջնջելու համար... Ձանբէզարի ալայբէյը իր վրայ է վերցրել յատուկ պարտաւորութիւններ ևս — Նա բացարձակ սկսել է ֆէրմ ա ն ո վ հաւաքել մնացորդ ամբողջ բ ա կ ի ա ն ե բ ը (տուրքերը): Մեծ խմբերով շրջում է այս ու այն կողմը և բռնի առնում է ինչ որ ուզում է:

Հ Ի Ն Բ Ա Յ Ա Չ Է Դ, 4 մարտ

Ալաշկերտի գաւառում, գլխաւորապէս ռուս-թիւրքական սահմանագլխին, համիդիէները օրէցօր շատանում են: Բացի գլխաւոր կենտրոններից — Թօփրագազէ, Գարաքիլիսէ, Բայազէդ ու Մօսուն՝ ուր վերջերս շինել են առանձին զօրանոց: Նրանք ցրած են փոքրիկ աւանների մէջ և ապրում են ժողովրդի տներում — ժողովրդի հաշին: Եօնչարու, Մանկասար, Մազրա, Երիցու վերդի հաշին: Եօնչարու, Փրանկ Երիցու գիւղը, Խայասպէկի գիւղը, Յեխնիթափէ, Փրանկ Մոլասիւլէյման, Խասսուր, Յամատ, Խաչու, Չետկան, Մոլասիւլէյման, Խասսուր, Իւչքիլիսէի վանքի գիւղը, Ջուշան, Խուլիպուճախ, Մօսուն և այլն գիւղերը լեք են զօրքերով ու համիդիէներով, 50-70 հոգի, ամենանազը 20 հոգի: Բռնի կերպով առնում են ժողովրդից խոտ, կահ կարասիք ու ամեն տեսակ յարմարութիւններ, ուտում են գիւղացու հետ հաւասար կամ պահանջում են այս ինչ կամ այն ինչ կերակուր իրանց համար: Ամեն մի պահանջ կատարել կերակուր իրանց համար: Ամեն մի պահանջ կատարել գողանում են: Եթէ երբ և իցէ վերադարձնեն էլ այդ առանց կաշառքի չի լինիլ:

Համիդիականը միայն 60 փարա օրապահակ է ստանում, այն էլ ոչ ժամանակին, մեծ մասամբ ապառիկ չէնց դրա համար էլ նրանք բացարձակ աւերուած են հենց դրա համար էլ նրանք բացարձակ աւերուած են (նախ) ձիւնու, ուտեստին թէ ինչ՝ թալանի և գողութեան են դիմում, որպէսզի իրանց հաշին մի ձար թեան են դիմում, որպէսզի իրանց հաշին մի ձար թեան են իրար հետ, հայհոյում են կառավարի: Կուտում են իրար հետ, հայհոյում են կառավարի: Բայց էլն ամեն վնասը խեղճ ժողովրդի գըրութեան: Բայց էլն ամեն վնասը խեղճ ժողովրդի գըրութեան: Բայց էլն ամեն վնասը խեղճ ժողովրդի գըրութեան: Բայց էլն ամեն վնասը խեղճ ժողովրդի գըրութեան:

Համարձակում մտնել իրանց գիւղը համիրդիէնքերի վախից օրինակ Յեղնիթափէի գիւղացիները փախուստ են տւել գիւղից, մնում են Գարսաքիլիսէում և կառավարութիւնը ոչինչ էլ չի անում:

Համիրդիականները մի ամսւայ ընթացքում Ալաշկերտի բաւառում կատարել են հետևեալ թալանները.

Ղ ա զ ի գիւղից	16	ոչխար,
Յ ե խ ն ի թ ա փ է ի ց,	25	»
Ե օ ն ջ ա լ ու ի ց	15	»
Ք ո Ր ու ի ց	45	»
Խ ու մ լ ի պ ու ճ ա խ ի ց,	4	»
Զ ու ջ ա ն ի ց	10	տիկ պանիր:

Ա Ա Ա Շ Կ Ե Ր Տ, 2 ապրիլ

«Ժողովուրդը անկարող է հին տուրքերը վճարել, իսկ կառավարութիւնը նշանակում է նոր տուրքեր: Կարգադրելու է որ շուտով իւրաքանչիւր տան համար վճարելի 10 ղուրուշ թիւսքի փարէսի (ծխահարկ), բացի դրանից իւրաքանչիւր մարդ, 15 տարեկանից ի վեր, նայած դործին և կարողութեան, պիտի վճարէ 5 ղուրուշ մինչև 700 ղուրուշ առանձին տուրք: Դա էլ երրորդն է այս տարի գործարքած նոր հարկերի շարքում: Առաջինը եղաւ, ձիու ու կովերի գլխարկներ, 10-ական ղուրուշ: Այս անօրինակ տուրքերը առաջ պիտի բերեն ի հարկէ, նոր բռնութիւններ և նոր թալաններ:

Կ Ո Վ Կ Ա Ս Ե Ա Ն Խ Ա Բ Ր Ի Կ Ն Ե Ր

(ՔԱՍՆՆՆՆԵՐՈՐԻ ՆԱՄԱԿ)

Ա. Պետերբուրգ, 12 յունիսի

Սուգի տարեդարձ է:

Մի տարի անցաւ այն օրից, երբ հեռագիրը գուժեց հայոց եկեղեցու կալածների յափշտակութեան բռնութիւնը, այդ տմարդի քայլը միապետական կառավարութեան:

Ի՞նչ արդիւնաբերեց այդ սգալից տարին.— ցասումն, դիմադրութիւն, ցոյցեր, արիւն, դիակներ սգապատ եկեղեցիների գաւթիթնորում, դաւադրական ձեռնարկներ Ժողովուրդական խաղաղ խաւերի մէջ:

Ի՞նչ կորցրեց հայ Ժողովուրդը, — հպատակութեան զգացմունքը, այդ ցայտուն յատկանիշը Արարտեան պատմութեան:

Ի՞նչ վաստակեց ցարիզմը.— մի նոր թշնամի, խոցւած մինչև սրտի խորքը, անհաշտ, լի ատելութեամբ:

Եւ այդ «սգաւոր» ատելութեան բորբոքումն է, որ շտապում է արտայայտել այսօր, թալանի օրէնքի ամօթալի տարեդարձին: Ընդհանր են լսում: Լուր կայ, որ քաղաքներում, գուցէ և գիւղերի մէջ պատրաստութիւններ են տեսել ցոյց եւ ր անել կառավարութեան դէմ, թէ և խաղաղ կերպով: Հոգեհանգիստ ընկած զոհերի յիշատակին. համախմբումն եկեղեցիների մէջ, որ Ժողովուրդական լեզուով կը նշանակի՝ աղօթք ցարիզմի անկման համար. գրգռել է կոչեր՝ ուղղած հասարակութեան — ահա խաղաղ ցոյցը, որը, ո՞վ գիտէ, ունէ ժանդարմի ներկայութիւնից կամ ոստիկանական միջամտութիւնից բորբոքած, կարող է փոխարկւել մի այլ ցոյցի, այնքան սովորական արդի ու ժողովրդի միջոցին...

Տեսնե՛ք թէ ինչով պիտի վերջանայ այս տխուր օրը: Տխուր և նոյնիսկ վատնագաւոր, որովհետև նա պիտի լքցնէ Ժողովուրդական սրտերը ատելութեան նոր զգացմունքներով, որոնց կուտակոււմը կարող է ծնել քաղաքական մի նոր դիպուած, գուցէ աւելի կնճռոտ, քան այն, որ տեղի ունեցաւ մի տարի առաջ: Նշանները այդ գոյնն են կրում: Վերքը այնքան խոր է, որ մինչև այժմ էլ թէ հոգևոր իշխանութիւնը և թէ հասարակութեան ներկայացուցիչները ոչ մի կերպ չեն համաձայնուում պետական գանձարանից փող վերցնել — եկեղեցապատկան փողը — հոգաւոր ընթացիկ ծախքերը: Կիսատ շինութիւններ կան. ձեւարանը կօպէկ չ'ունի. հոգևոր դրամարկները դատարկ են. էջմիածնում փող չկայ. հոգևոր պաշտօնեաները ոռճիկ չեն ստանում, շատ գործեր կանգ են առել.— բայց և չեն սպէս ազդանշանը մնում է նոյնը՝ «Չըվերցնել»: Մի երկու հատ փորձեր եղան հոգևորական անձինքների կողմից՝ հաշտ աչքով նայելու կառավարութեան առաջարկներին, որոնցով հրաւիրում, նոյնիսկ յորդորում և խնդրում են՝ գնալ համաձայնութեան ստորագրութիւն տալ ու փող ստանալ.— բայց այդ փորձերը հանդիպեցին բռնու գոգոհութեան և նոյնիսկ լուրջ սպառնալիքների, ուղղած «Թուլամորթ բացառութիւնների» հասցեին...

Այսօրայ ցոյցը մի նոր ազդանշան է այդ ոգևոր: Վիրաւոր, թալանի ենթարկւած «եկեղեցին» չէ ուզում զիջանել: Նա, տարագիր ճամբորդի նման, բռնաւորի շեմքին նստած, արդարութեան է սպասում: Հայոց կաթողիկոսը — երանի՜ չհիասթափւէր — նոր դիմումներ է արել թագաւորին, նրա մօրը, կնոջը, և ստում են՝ շատ ուրիշ ազդեցիկների, դարձեալ ու դարձեալ աղերսելով՝ վերաքննել խնդիրը և ազատել հայ եկեղեցին անհիմն կասկածներից: «Յատուկ Յանձնաժողով պիտի կազմւէր Պետերբուրգում — ստում են հաւատացողները — այդ հարցը վերաքննելու նպատակով, բայց պատերազմը խանգարեց»...

Պատերազմը խանգարեց: Որպիսի միամտութիւն:

14 յունիսի

Կովկասեան կառավարչապետը փորձում է ճառարանել Փակ է նրա սիրտը, աւելի փակ՝ գաղտնի ծրագիրների արկղը, բայց լեզուն, որ առաջ էլ վարժ էր շատախօսել, և միայն անցեալ տարւայ «փորձից» յետոյ ենթարկեց պապանձման, փոքր առ փոքր բացում է: Եւ կատակաբանութեան օրէնքին հետևելով՝ նա ուզում է սուր սպիտակ դարձնել զաւելուականը ողբերգական: «Դուք ինձ չէք հասկանում, և ինձ համարում էք թշնամի հայերին — ասաց նա՝ դառնալով Թիֆլիսի համբարութեան, որ եկել էր շնորհաւորութեան փոխարքայական պալատը, — մինչդեռ ես եմ ձեր միակ անկեղծ բարեկամը, ձեր բարին ցանկացողը: Այժմ այդ չեն հասկանում, բայց կ'անցնի տասն, տասնէ հինգ տարի և այն ժամանակ միայն կ'ըմբռնեն, թէ որպիսի՜ անկեղծ բարեկամ էի ես և որքան՝ օգտակար էին հայերի համար իմ արածներն ու ծրագիրները»:

Բռնաւորը մտածողի դերում: Լսել է խեղճը կամ կարգացել, որ երկրաբանի վրայ եղել են և կան մտքեր, որոնք անմատչելի են ժամանակակիցներին և յաճախ տգէտ ու խաւար շրջապատի

մէջ բուռն ցասումն են յարուցել դէպի նրանց ստեղծագործողները, բայց մոռացել է, որ այդ վերանորոգող բարձր, փիլիսոփայական մտքերի և սպանիչ, ստոր և ոստիկանական հալածանքների մէջ նոյնքան կապ կայ, որքան պօլիցիականի և փիլիսոփայի, մարդասերի ու մարդասպանի մէջ: Իշխան Գօլիցին իր դատարկ սրտի ամբողջ խորքից ատում է հայերին, խլում է հայ գիւղացուց հողը, եկեղեցուց՝ նրա սեփականութիւնը, ընկերութիւններից՝ նրանց իրաւունքները, ժողովրդից՝ նրանց դպրոցը, հալածում է հայկական միտքը, դրականութիւնը, լեզուն և այդ բոլորից յետոյ զաւելչական համարձակութիւն ունի հրապարակով ճառելու, թէ յիրեն չեն հասկանում՝ և յինքն է հայերի միակ անկեղծ բարեկամը:

Փոխարքայական պալատի մէջ, նրա հիմնարկութեան օրից ց'այժմ, շքեղազարդ խնջոյքների ժամանակ կամ գիշերային «օրգիս» ների միջոցին, կատակներ շատ են արել շատ ճառեր են արտասանել պաշտօնապէս և անպաշտօն, բայց այնպիսի քաղաքական կատակ, ինչպիսին այժմեանն է, երբէք և ոչ որ չէ լսել: Դրա համար պէտք էր լինել մի այնպիսի կատակաբան, ինչպիսին ցարի այժմեան «սիրելի ներկայացուցիչն» է, որին տրւած են անսահման, բացառիկ իրաւունքներ. . . յիմարութիւններ գործելու և աւելի էլ մեծ յիմարութիւններ ասելու:

Շատ ափսոս միայն, որ այդ յիմարութիւնները՝ «ժպիտ ու քրքիլ չեն յարուցանում, այլ վիշտ ու արտասուք: Եւ յիրաւի: Կարելի՞ է միթէ առանց վշտի ու արտասուքի ընդունել օրինակ, գօլիցինեան ամենավերջին ծրագիրը, որը բարձրագոյն հաստատութեան արժանացած, արգելում է բոլոր օտարա հպատակ հայերի մուտքը Կովկաս և առհասարակ Ռուսաստան: Դա մի նոր ու նենգաւոր հալածանք է հայութեան դէմ:

Ամէն մի մարդ, ինչքան էլ նա խաղաղ և անմեղ լինի, բայց եթէ կրում է հայ անունը և ռուսահպատակ չէ, չէ կարող ոտք դնել ռուսական սահմաններում, համաձայն այդ նոր կարգադրութեան: Ոչ մի ռուս զբսպանատուն և հիւպատոսարան չէ ուզում վիզէ անել անցագիրը, ասելով՝ «Արգելւած է, իրաւունք չ'ունենք»: Եւ հայ ճամբորդը, լինի նա ամերիկական քաղաքացի, թէ թիւրքահպատակ, եւրոպայական թէ պարսկաստանցի, կանգ է առնում «ամենամեծ բանտի» դռների առջև, ինչպէս չինական պատի դիմաց: Ողբալի է մանաւանդ պարսկահայերի վիճակը, որոնք դէպի Եւրոպա անցնելու կամ Եւրոպայից իրենց երկիրը դառնալու համար այլ ճանապարհ չ'ունին, բայց եթէ Կովկասն ու Ռուսաստանը, և որոնց համար, չնայած անթիւ աղբրսանքների և Շահի միստրների միջամտութեան անգամ, ոչ մի դուռ չի բացուում: Խնդրատուններին զբսպանատները առաջարկում են դիմել Պետերբուրգ, ներքին գործերի մինիստրութեան, հրէշապետ Պլէվէին, որից արդարութեան զգացմունքը, ինչպէս գիտէք, այնքան հեռու է, որքան երկինքը՝ երկրից:

Ինչն է եղել այդ խենթագոյն կարգադրութեան պատճառը, կը հարցնէք: Գլխաւորը այն, որ Գօլիցինի կարծիքով օտարահպատակ հայերն են, որոնք քաղաքական յուզմունքներ են տարածում Կովկասեան հայութեան մէջ և հետևաբար՝ Կովկասը խաղաղացնելու համար՝ ամենալաւ միջոցը՝ այդ քաղաքական միկրօքները՝ վանելն է ցարերի թագաւորութիւնից: Գաղտնի

ուստիկանութեան կարծիքով՝ Գօլիցինի կեանքի դէմ անցեալ նոյեմբերին փորձ անողները թիւրքահպատակ հայեր են եղել, և այդ «կարծիքն» արդէն բաւական է, որ թիֆլիսի պալատի մենաւորը՝ լեցւած անծայր ատելութեամբ, առաջարկ անէր Պետերբուրգի իր համախոհներին՝ արգելելու օտարահպատակ հայերի մուտքը Ռուսաստան:

Շնորհիւ այդ օր էն քի՛ հաղարաւոր մարդիկ սահմանը անցնել չեն կարող. ճամբորդը իր տունը դառնալու հնար չ'ունի, վաճառականը՝ ոտք դուրս դնելու իրաւունք, հիւանդը՝ բժշկուելու չի կարող գնալ, երիտասարդը՝ ուսանելու: Եւ իշխան Գօլիցին, հեղինակը այդ դասական ամբարտաւանութեան, առանց խղճի խայթի և առանց կարմրելու, բայց երևի նոյեմբերեան յիշողութիւններից աղբւած՝ պաշտօնական ճառասացութեամբ յայտարարում է՝ որ յին քն է հայերի միակ անկեղծ բարեկամը:

«Բարեկամ»: Յետք թէ որպիսի խօսքերով է ուղում բարձր դնել հայերի գլխատակին այդ տկարամիտ եզուհտը, այդ սամօզուր-սենատորը:

Վերջաբանի փոխարէն:
Հայերի «անկեղծ բարեկամը» չորս ամսով դադարեցրեց մանկական «Աղբիւր» ամսագիրը և նրա յաւելւած պատկերազարդ «Տարազ» շաբաթաթերթը. . . վնասակար ուղղութեան համար:

Հեշտ է երևակայել թէ, ինչ պիտի լինի այդ «վնասակար ուղղութիւնը» մի մանկական ամսագրի մէջ, որ իր պատրիկ ընթերցողներին զարձացնելու համար ըէբուսներ է տպագրում, իսկ մեծերի համար՝ դերասանութիւնների պատկերներ, այն էլ միշտ անցած գրքնիչ ձեռքով, ամենահաւատարիմ կ'ծանը միապետական ձեռքով, Երբ անցեալ տարի, 1903-ին, իշխան Գօլիցին երկրում: Երբ անցեալ տարի, 1903-ին, իշխան Գօլիցին դադարեցրեց «Մշակ» և «Նօվօե Օբօզրէնիէ» նոյնպէս դադարեցրեց «Մշակ» և «Նօվօե Օբօզրէնիէ» նոյնպէս «վնասակար ուղղութեան» պատճառով, գտնւեցին «հեռատես գլուխներ», որոնք մեկնաբանում էին այդ կարգադրութիւնը. — «Քաղաքական թերթեր են, ազդեցիկ, թէև նախնական գրաքննութեան ենթակայ», ասում էին դրանք: Ինչ պիտի ասեն այժմ: Ինչ «վնասակար ուղղութիւն» գտաւ մեր վսեմափայլ Սամօզուրը մի մանկական ամսագրի մէջ, որը նոյնիսկ իր պրօգրամի զօրութեամբ, նոյնքան հեռու է ուղղութիւնից, որքան մանկութիւնը՝ քաղաքականութիւնից:

Ամէն մարդ իրաւունք ունի յիմար լինելու, բայց իշխան Գօլիցին — երգում ենք բոլոր սուրբերով — ի չարն է գործ դնում այդ իրաւունքը:

Է. ԱԿՆՈՒՆԻ

Թ Ե Ր Թ Օ Ն

ՍԱՍՈՒՆԻ ՀԱՐՅԸ
ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ՊԱՐԼԱՄԵՆՏՈՒՍ

ՅՈՒՆԻՍԻ 9-Ի ՆԻՍՏ

(Պաշտօնական արձանագրութիւն)

ՆԱԽԱԳԱՆ. — Խօսքը պատկանում է պ. Ֆրանսիս դը Պրէսանսէին՝ ուղղելու մի հարցապնդում արտաքին գործերի պ. մինիստրին, որը այդ ընդունում է:

ՅՐԱՆՍԻՍ ԴԸ ՊՐԷՍԱՆՍԷ. — Պ ա Ր Օ Ն Ե Ր

Մի քանի օր առաջ ես հաղորդեցի արտաքին գործերի պ. մինիստրին, որ դիտաւորութիւն ունիմ մի հարցում տալու այն ծանր անցքերի առթիւ, որոնք նորերս տեղի են ունեցել Հայաստանի մէջ Սասունում և Մուշում: Պ. մինիստրը հաճեց իր համաձայնութիւնը տալ այսօրուայ համար:

Պատգամաւորական ժողովը կը հասկանայ այն անհամբերութիւնը, որ ես ցոյց եմ տալիս այդ անցքերը ամբիօնի առաջ բերելու համար: Կա կը հասկանայ, երբ կը տեղեկանայ, որ ներկայ դէպքում մենք գործ ունենք ոչ թէ բարբարոսութեան կամ ֆանատիկոսութեան մի պատահական բռնկման հետ, այլ նախամտածած մի ծրագրի սխտեմատիկ գործադրութեան հետ: Պատգամաւորական ժողովը կը հասկանայ իմ անհամբերութիւնը, երբ նա կիմանայ, որ մեր առջև հրապարակ են գալիս ոչ թէ լոկ փաստեր, կամ կողիցացած փաստերի մի շարք, այլ կրկնողութիւն, վերսկսում այն ոճրի, որ սրանից 10 տարի առաջ այնքան խորապէս յուզեց Եւրոպան:

Այն օրից, երբ ես ծանուցի իմ դիտաւորութեան մասին, մէկը կանխեց ինձ բրիտանական պարլամենտի մէջ: Համայնքների ժողովի մի հեղինակաւոր պնդում, արտաքին գործերի նախկին օգնական-մինիստր և նշանաւոր պրօֆէսոր Ջեյմս Բրայս, մի հարցում արաւ այդ առիթով: Արտաքին գործերի մինիստրութեան պետական քարտուղար լորդ Պերսիի կողմից տրւած պատասխանից ես առաջ կը բերեմ այն, որ նա ընդունեց, որ նոյնիսկ պաշտօնական հաղորդագրութեան համեմատ, 25 հայ փւլղեր աւերած են Սասունի շրջանում, 12-ը Մուշի և 12-ը Վենձի շրջանում: Ինձ թւում է, որ դա բաւականաչափ հաստատուն է արդէն այն իրողութիւնների, որոնց վրայ ես հրաւիրում եմ ձեր ուշադրութիւնը:

Սասունը, ինչպէս բոլորը յիշում էք 1894-ի անցքերից, այն լեռնային շրջանն է, որ դանում է հայկական ճաւրոսի մէջ Վանայ լճի մօտ, ունենալով իր հիւսիսում՝ Մուշը, հարաւում՝ Գիարբէքիւրը և արևելքում՝ Վանը: Կա բնակած է խառը հայ և քիւրդ ազգաբնակչութիւններով:

Հայերը երկար տարիներից կարելի է ասել դարերից իվեր գտնուում են այնտեղ միանգամայն ուղեբեգական մի դրութեան մէջ: Կրանք գտնուում են, ասես, երկանի երկու քարերի միջև մի կողմից՝ թիւրք իշխանութիւնների ճշնոււմը, միւս կողմից՝ քիւրդ ցեղապետների ֆէոդալական անիշխանութիւնը: Մի քանի ժամանակ աղաները կամ թափառական ու նստակեաց ցեղերի պարագլուխները բաւականացել էին լոկ գերիշխանների պաշտօնով, որոնք պահանջում էին իրենց ճորտերից մեծաբանները և չափազանց ու ապօրինի առասանորդներ, բայց որոնք, այնուամենայնիւ, տարածում էին նրանց վրայ այն արհամարհոտ հովանաւորութիւնը, որ ոչխարների մի հօտի սեփականատէր տարածում է իր անասունների վրայ: Ընորհիւ այսպէս անանւած քաղաքակրթութեան առաջադիմութեանը արևելքի մէջ, նրանք դադարեցին գերիշխան լինելուց և դարձան պարզ աւազակներ: Կերկայումս, նրանք ամեն տարի պահանջում են հայերից վճարել միշտ աւելի ու աւելի ծանր հարկեր, այն ժամանակ, երբ տաճկական գանձապետութիւնը ևս չէ կորցնում իր իրաւունքները:

Այդ խեղճ, երկրագործ ազգաբնակչութիւնից՝ թիւրք

կառավարութիւնը աւնում է ոչ պակաս քան 13 օրինական տուրքեր, առանց հաշուելու ապօրինի տուրքերը: Ես կը բաւականանամ առաջ բերելով միայն հողային հարկը 5⁰/₁₀ 1⁷/₁₀-ի կամ 1⁵/₁₀-ի առասանորդը, որ չեն վճարում բնական բերքերով, այլ դրամով և կանխիկ, ապա այն հարկը, որ դրւում է ոչխարների վրայ, որոնք կազմում են հայերի գլխաւոր հարստութիւնը: Վերջապէս, դիւնուրական տուրքը, աւնւապը 12 Ֆր. 50 սանտիմ, որ աւնում են իւրաքանչիւր մի չափահաս հայից:

Ահա այդ շրջանի մէջ է, որ ներկայ տարւայ սկզբից իվեր տեղի են ունեցել այն իրողութիւնները, որոնց վրայ կուզէի հրաւիրել պատգամաւորական ժողովի ուշադրութիւնը: Մի քանի ամսից իվեր Կ. Պօլսում ասում էին, որ մի բան կատարել է այդ կողմերու Լսում էին, թէ յեղափոխական մի շարժում է մղւում Մուշի և Սասունի մէջ: Փորձել էին հայ ազգի առաջնորդ պատրիարք Օրմանեանին միջամտել տալ որպէս զի, այսպէս ասած, հպատակեցնէ իր հօտը սուլթանի կամքին: Միմիայն այդ հանգամանքը կարող էր արդէն սարսափեցնել մեզ քանի որ յիշեցնում էր 1894-ի ոճրի նախանշանները:

Եթէ կամենաք վերարտադրել ձեր յիշողութեան մէջ այդ ժամանակաշրջանում կատարւած անցքերը, կը տեսնէք, որ ծագումը միևնոյն է, ինչ որ տեսնում ենք մեր առջև այս վայրկեանիս:

Որքան էլ դանդաղ և դժւարութիւններով հասնեն մեղ լուրերը այդ վայրերից, որքան էլ նրանք, այսպէս ասած, մալըին տաճկական մաքսատներում և փոստերում — մենք այնուամենայնիւ կարողացել ենք ստանալ նամակներ ու հեռագիրներ, որոնք վկայում են, որ մեծ գործողութիւնը սկսել է փետրուար ամսից:

Այդ ժամանակից ի վեր Մուշի շրջանի Յունան մեծ գիւղը բոլորովին աւերել է, ամբողջ ազգաբնակչութիւնը կոտորել, կանայք ու երեխաները նախապէս կրել են անարգանքներ թիւրք զինուորների սողոմական վայրագութեան բոլոր նրբութիւնները: Այդ ժամանակից իվեր երկար շաբաթների ընթացքում Գուււր զբաղւած էր բացառապէս, ինչպէս նա անում է առհասարակ, հերքումներով, խճբճանքներով իր զոհերի վրայ բարդելով այդ կոտորածների պատասխանատուութիւնը:

«Բարեբախտաբար, Եւրօպան այլևս այնպէս անգիտակ չէ, ինչպէս 10 տարի սրանից առաջ: Մի քաջարի թերթ, հիմնւած հայերի և իրենց բարեկամների միջոցով, Deo Armenia-ն, յանձն է աւել պարտականութիւնը՝ լուսաւորելու հանրային կարծիքը, մատակարարելու նրան այն բոլոր լուրերը, որոնք կարող են մեզ հասնել այն հեռաւոր երկրներից, երբեմն նաև այն տարտամ ձայները, որ Գիլզայէի 1876-ին, բուլղարական կոտորածների նախընթաց օրը, անանում էր «բազարի շուկներ», որոնք սակայն երևան բերին մի ամբողջ ազգի դէմ գործած ոճիրը:

Այդ մեղացու մեծերի շնորհիւ մամուլը յուզեց: Պարլամենտական գործիչների և հրապարակախօսների մի միջազգային խորհրդագործով տեղի ունեցաւ Լօնդօնում՝ դիմագրաւելու համար 1894-ի ոճրի վերանորոգման նոյնիսկ դիւանագիտութիւնը, որ այնքան ուշ է յուզւում, սթափուց: Քրանսիայի, Ռուսաստանի և Անգլիայի դեսպանները մի քանի անգամ հրաւիրեցին սուլթանի ուշադրութիւնը ներկայ դրութեան վտանգների վրայ և մանաւանդ այն վտանգի վրայ, որ առաջ է գալիս Մուշի

Հայերը, որոնք միայն դանդաղ ու դժւարութեամբ կարողացան հասցնել Եւրոպային այս պատմութիւնը և իրենց բողոքը, յոյս ունեն — այլապէս նրանք կը յուսահատուէին, որ այս անգամ Քրանսիան, Եւրոպան չեն մնայ անշարժ, անտարբեր, անջոր հանդիսատեսներ այդ ոճիրներին վերանորոգման հանդէպ: (Ծափահարութիւններ):

Մեկ են դիմում նրանք և ես գիտեմ, թէ ինչ պատասխան պիտի տան մեզ, գիտեմ, քանի որ ճանաչում եմ օսմանեան դիւանագիտութեան սովորութիւնները: Նա նախ և առաջ հէրքում է իրողութիւնները իրենց ամբողջութեամբ, ապա երբ ստիպւած է խոստովանել նրանց մի մասը, նա ձգնում է մեղմել նրանց, ապա երբ դուրս են մղում նրան իր վերջին ապաստանից, նա սկսում է հաւատացնել, թէ իսկական յանցաւորները իրենք զոհերն են: Միթէ՞ մենք կարող ենք ընդունել այն պատուակները, պարտութիւններն ու ստերն որոնք՝ դժբախտաբար, 1894-ին կարողացան կանգնեցնել, խորտակել եւրոպական ու Քրանսիական դիւանագիտութեան անհրաժեշտ գործողութիւնը: Ոչ, մենք այդ չենք կարող անել, մենք այդ չենք անել: Մենք այդ չենք անի, գիտենք օսմանեան դիւանագիտութեան գործելու սովորական եղանակները և, մանաւանդ, քանի որ նոր փաստեր չեն սրանք, որոնց նկատմամբ ուէ մի տեսակով կարող էր ներելի լինել չընայած այնքան վճռական փորձերին: Երբ մենք հանդիսատես ենք մի մեծ ոճրի կրկնութեան, որի յաւերժացած մանրամասները վերարտադրուում են մեր աչքերի առաջ, անհաւատալի ճշտութեամբ: (Ծափահարութիւններ):

Կը շարունակեի

Մ Ա Մ Ո Ւ Լ Ի Տ Ե Ս Ո Ւ Թ Ի Ի Ն

* * *

Իր յուլիս 14-ի համարին մէջ 'Temps' խմբագրականով մը կը խօսի Հայաստանի վերջին դէպքերուն վրայ ազդու լեզուով մը՝ ուրիշ առաջ կը բերենք:

«Այն օրինաւոր յուզումը, որ առաջ բերին Սամնոյ կոտորածներու վերսկսումը և ուսուստրիական խիստ անբաւական բարենորոգումներու ծրագրին այսպիսի կիրարկութիւնը Մակեդոնիայի մէջ, արտայայտեցաւ ոչ միայն Եւրոպայի ազատական երկիրներու զանազան խորհրդարաններուն մէջ, այլև միջապարամենտական կոնֆերանսով մը՝ Լոնդոնի մէջ: Անգլո-հայկական ընկերութեան — որուն նախագահն է պ. Ստեֆէնսըն — հրաւիրանքով և Պալքանեան կոմիտէի աջակցութեամբ, Մեծն-Բրիտանիայի, Քրանսիայի և Իտալիայի ներկայացուցիչները միասին կը հաւաքուին ուսումնասիրելու համար այն միջոցները, որոնք կարելի պիտի ընեն արևմտեան երեք մեծ պետութիւններու դրական գործակցութիւնը:

«Անգլիացի երեսփոխան մը, պ. Բրայս, արտաքին գործերու նախկին օգնական-նախարար, ունենալով իր կողքը՝ փոխ-նախագահ, Քրանսիացի երեսփոխան մը, պ. Քրանսիս սը Պրէսանսէ, կը նախագահէր այդ կոնֆերանսին. ու բազմաթիւ անդամներ՝ անգլիական երկու խորհրդարաններէն, պատուաբեր համարած էին բերել աջակցութիւնը իրենց ներկայութեան ու խօսքին՝ այդ այնքան կարևոր ու արժանաւոր դատին:

«... Այդ կոնֆերանսը ցոյց տուած է որ կը տիրէ

ընդհանուր համաձայնութիւն երեք ազատամիտ ազգերու քաղաքագէտ անձնաւորութիւններու մէջ՝ ճանչնալու համար ստիպողականութիւնը միացեալ ու կորովի միջամտութեան մը՝ թիւրքի մէջ: Այնքան բախտաւոր ու այնքան բարեկամական համերաշխութիւն մը, որ հաստատուած է երեք պետութիւններու մէջ և որ չի կրնար քանդուիլ առանց լրջապէս վտանգելու քաղաքակրթութեան, յառաջդիմութեան ու մարդկութեան դատը պարտաւոր է ամբողջովին ամրապնդելու ծառայելով բարեկարգութեան ու խաղաղութեան հաստատումին կայսրութեան մը մէջ, որ կը վրդովի ու կ'աւերւի բռնակարգութեան մը խելակորոյս սոսձագութիւններով:

«... Պէտք է ստիպել սուլթանը փրկանք մը տալու իր ձեռքին մէջ մահացու գործիք մը դարձուցած այն անկախութեան համար, զոր նա կը վայելէ Տաճկաստանի ամբողջութեան պահպանման սկզբունքին շնորհիւ, սկզբունքի՝ որ ուրիշ նպատակ և գոյութեան իրաւունք չունի՝ եթէ ոչ արգիլել իրարու բաղխելէ մեծ պետութիւններու ագահ ցանկութիւնները:

«Որքան ալ իրական ըլլայ կարևորութիւնը այդ կարգի կոնֆերանսի մը, որ կ'ապացուցանէ զգացումի ու տեսակէտի միակութիւնը քաղաքակրթութեան գլուխ կանգնած ազգերու, անոր միակ շարժառիթը չէր անշուշտ անգամ մը ևս գոյութիւնը ստուգելու խիստ ծանօթ հոգեկան վիճակի մը. այդ ցոյցը կէտ նպատակի ունէր կազմակերպելու խորհուրդներու միջև ու նոյն օրինակ միջնորդութիւն մը կրնար ձևուցուիլ կառավարութիւններու մօտ, բաղձանք ունենալով քաղաքներէ անոնց բարի կամեցողութիւնը, վառել անոնց եռանդը ու մղել զանոնք միացեալ քայլի մը, որ ունենայ բնոյթը խելու Բ. Դոնէն պաշտօնանկութիւններ և անհրաժեշտ դարձած բարենորոգումներ:

«Երբ Լանտաստուն, կոնֆերանսին ղեկած իր մէկ պաշտօնական հաղորդագրութեան մէջ, բարոյական խոստումներ ըրած է, դիւանագիտութեան հետ ընդմիջտ անբաժան խոհեմութեամբ մը, որոնց պահանջներն ու գործադրութիւնը կախած է հասարակային կարծիքէն ու անկից միայն: Ներելի չէ կասկածիլ թէ պ. Դելկասէ ևս քարոզած չըլլայ միևնոյն զգացումները, որոնց նա յաճախ տուած է հրապարակային ու պաշտօնական արտայայտութիւն մը, և այդ տեսական հաստատումը առնուազն բնորոշած է պատուաբեր կերպով իրեն գործելու եղանակը, իր կարգ մը նախորդներու բռնած դիրքէն»:

Ու Temps կը վերջացնէ իր այդ խմբագրականը խիստ բողոքով մը Սամնոյ կոտորածին շարունակութեան, մակեդոնական բարեկարգութիւններու անգործութեան դէմ, հրաւիրելով ազատամիտ կառավարութիւնները, հաւանութեամբ սակայն այն բողոք պետութիւններու՝ որոնք Արևելքի մէջ նւիրուած չեն տխուր ու ձեռնաձիրական քաղաքականութեան մը, որ համաձայնին հետեւեալ կէտերու մէջ. «Պաշտօնանկութիւն օգնի փաշայի և Ֆէրիդ բէկի, — Գործադրութիւն 61-րդ յօդուածի՝ կիրարկուելու թեւ մը 1895-ին խմբագրուած բարեկարգութեան ցրագրին. — Բազմացում Մակեդոնիայի մէջ միջազգային ստիկանութեան ու հաստատութիւն երկու երկիրներու մէջ դրական կօնտրօլի մը»:

Երբ այս համեստ ծրագիրը կազմել, Temps կ'առա-

Ջարկէ գայն Բ. Գուան ենթարկելու ու երբ այս վերջինը դիմադրէ՝ ընել նաւային ցոյց մը: նման այն ցոյցերուն, որոնք Բերլինի դաշնագրութենէն իվեր, Տինգ զանազան առիթներու մէջ գործադրուած և միշտ յաջողած են: Դեմոս-ի վերոյիշեալ խօսքերը աւելի նշանակութիւն կը ստանան, երբ յիշենք ֆրանսիայի արտաքին գործերու նախարար պ. Գելկասէի յայտնի յայտարարութիւնը, որով նա՝ ակնարկելով Թրքական վատմար րէժիմը, հարստահարուող ու մարտիրոսացող ժողովուրդներու փրկուածութեան միակ ելքը կը գտնէր սպաստամբութեան մէջ: Առաջին անգամն էր Թերես, որ նախարար մը, մուցած իր պաշտօնին խոհեմ՝ պահպանողականութիւնը՝ կը նախարարածէր ֆրանսայի խորհրդարանի բեմէն՝ պատմական այդ մեծ ճշմարտութիւնը:

Կ Ե Ն Ս Ա Գ Ր Ա Կ Ա Ն



(Տես «Գրօշակ» № 6)

Վանեցի շատ չքաւոր ընտանիքի մը զաւակ, Յովհաննէսը իր նախնական կրթութիւնը ստացած էր Նորաշէնի Թաղային երկդասեան դպրոցի մէջ, ուրկից դուրս գալով նետած էր այն ժամանակեան «Արմենական» տաք ու Թարմ գործունէութեան մէջ:

1896 թիւը արեան ու արցունքի Թուական դարձաւ համակ Վասպուրականի համար: «Վանի դէպքն» էր: Յովհաննէսը ա զ ա լ Ը ձեռքին ընկերներուն հետ միատեղ յանդուգն յամառութեամբ՝ դիրքէ դիրք, կը պաշտպանէին զօրքին ու խուժանին դէմ:

Կուէն վերջ՝ երբ ահագին Վասպուրականը՝ ջահել-ջիւան երիտասարդութեան գերեզմանը դարձած էր, ճէօջաղան ընդհանուր վճատման ժամանակ կը դիմէր Պարսկաստան, սպա Ռուսաստան մի առժամանակ հոն մնալու դիտաւորութեամբ:

Վանեցի պանդուխտներէն շատերը այդ Թուականներին կը դիմէին Կովկաս: Անդրկովկասեան կրօնական սպասանը, քաղաքներու մէկին մէջ ճէօջաղան մի պաշտօն կը ստանայ, սակայն չի կրնար երկար մնալ տաղակացուցիչ պաշտօնին մէջ:

Խանասորի արշաւանքի լուրը առնելուն պէս՝ կ'ըլտապէ դէպի Պարսկաստան ու կը մտնէ կամաւորներու շարքին մէջ: Ընկերները կը պատմեն որ ան շատ անգամներ կը մոռնար ինքնիրեն, դիրքէն դուրս կը նետուէր Թշնամու գնդակներու սարսափելի տարափին տակ: Արշաւանքէն ողջ վերադառնալով կը վերստանայ Անդրկովկաս իր նախկին պաշտօնին. սակայն այս անգամ աւելի կարճ կը տևէ իր պաշտօնավարութիւնը: Երկիր վէնք անցնելու նոյն ժամանակեան նախնական ձևը գոհացուցիչ չէր գտնէր և այդ հանգամանքը երկար օրերու խորհրդածութեան առարկայ դարձած էր անոր համար. ու լուռ տանջանքներէ յետոյ՝ որոշեց այս անգամ Թողուլ Ռուսաստանի հողը և նախընտրել փոխադրութեան գործին, նրա աւելի լայն ու աւելի կանոնաւորման հարցին: Այդ նպատակով նա կը դիմէ Ա.-ի կամիտէին՝

առաջարկելով գնալ ու գործակցիլ Աղբօր՝ Գ.-ի մէջ: Պէտք եղած յանձնարարականով կուգայ Աղբօր մօտ, որը կ'ուղարկէ զինք Շ. ուրկից կը նշանակուի Գ.-ի գծի վրայ: Ահագին դժուարութիւններու և խօջընդոաներու յաղթելով՝ անիկա մեծապէս կը նպաստէ փոխադրութեան գծի կանոնաւորման:

Երկու տարի անընդհատ նւիրելով այդ բեղմնաւոր գործին, Ֆլէեան կը կասկածուի և կ'ստիպուի Թողնել այն տեղն ու վերադառնալ Վան: Մի անգամ կասկածուելով, կը խուզարկուի իրենց տունը, ուր կը գտնուի «Գրօշակ»-ի մէկ օրինակը, ասով ստիպուած կը լինի փախստական դառնալ և մի քանի ամիս յետոյ՝ կը սկսի ազատ շրջիլ:

Գաւառներու կազմակերպութիւնը այդ միջոցին Թոյլ ու անկանոն լինելուն պատճառով՝ կը վճռուի կազմել գաւառական կամիտէ մը, որու անդամներէ մէկը կը լինի ինքը. իսկ Վարդգէսի ձերբակալումէն վերջ, ան կը հրաւիրուի տեղական կամիտէի մէջ, լայց ժողովին նըստակեաց պաշտօնը չէր ըստականացներ ան: Վերջին անգամ ընկերացաւ Մ.-ի գծով շարժուող խմբին հետ, մասնակցելով փոքրիկ ընդհարման մը:

Անցեալ 1903 թիւն չ. Յ. Գաշնակցութեան ընդհանուր ժողովի հրաւիրագրի վրայ՝ տեղական գործիչներու կողմէն ընտրուեցաւ իբր պատգամաւոր: Ու ահա այս անգամ երբ կը վերադառնար երկիր՝ իր ընկերները գրկելու բուռն տենչով, երբ Վնդհանուր ժողովի արծարծած բոլոր հարցերին մասնակից ու գիտակ՝ զննակիր խմբի հետ մտաւ երկիր, Վանէն միայն 2-3 ժամ հեռու, զո՛հ գնաց անգուլթ գնդակին՝ 25 տարեկան հասակին մէջ:

Իր ծննդավայրի նորահաս երիտասարդութիւնը Թոյլ նայէ, երկար նայէ անոր դէմքին ու վրէժի և զայրոյթի վառ զգացումի հետ սնուցանէ նոյնպէս իր սրտի մէջ անբիծ, զոհաբերուող ու վեհ գաղափարներ:

Յարգո՞ւք յիշատակիդ, սիրելի ընկեր. լեռան գլուխը միայնակ հանգչած քու շերիմդ, Թոյլ ծննդավայրիդ նո՛ւ նորահաս երիտասարդութեան համար ոգևորութեան աղբիւր դառնայ:



Ծնած 1861-ին Գողթանի Հանդամէջ գիւղում, սկզբընական կրթութիւնը Ագուլիս, միջնակարգը՝ Ներսիսեան դպրոցում, ուսուցիչ Վերին-Ագուլիս, Նուխի, Գանձակ. դպրոցների փակումից յետոյ՝ պաշտօնեայ Բագրի առևարական մի տան մէջ և սպա մասնակից արդիւնաբերական անկախ ձեռնարկների, ուր և գտաւ նրան վաղահաս մահը 1903-ի վերջին՝ ահա նրա կենսի համեստ կմախքը:

Այդ համեստ կմախքը, սակայն, ունեցաւ զովելի զարգարաններ. կողմնակից ազատ ու նոր գաղափարների երիտասարդ Գաւթեան այդ գաղափարների տարածման նախընտրելի երիտասարդ ուժերը Թէ ուսուցչական սպապարհում, Թէ իբրև Թղթակցող և Թէ այն ժամանակ, երբ նա էլ շատերի հետ միասին, միլիոնների աշխարհում իր ապրուստն էր որոնում: Կողմնակից հայկական յեղափոխական գործին, նա՛ իբրև Գաշնակցական տեղա-

կան խմբերի անդամ՝ անդադար քարոզում և տարածում էր յեղափոխական միտքը.— նրա ձեռքի տակ շատ պատանիներ և անգրագէտներ անցան. նրա ջանքերով շատ խմբեր կազմեցին և շատ նպաստներ եղան թիւրքասայկական դատին: Այդ օրինակ գործունէութեան պատճառով 1895 թւին ենթարկւեց խուզարկութեան և բանտարկւեց Ծ ամով, սակայն այդ պատիժը չյուսաստեցրեց նրան. . .

Ցարաբխտաբար ծանր հիւանդութեան հարւածը վերջին տարիները կտորեց նրա կազմեաձքն ու եռանդը և նա մարեց՝ չկատարած կէսը այն աշխատանքի, որին ընդունակ էր՝ իր հայեացքներով:

Ա Մ Ս Ա Լ Ո Ւ Ր Ե Ր

* * *

Կեղ տեղեկացնում են արժանահաւատ աղբիւրից, որ Քրանսիական կառավարութիւնը որոշել է առաջ մղել 1895 թւի Մայիսեան ընտրութիւնների ծրագիրը Հայաստանի համար, որը ինչպէս յայտնի է պաշտօնապէս ընդունւած էր երեք մեծ պետութիւնների՝ Քրանսիայի, Անգլիայի և Ռուսաստանի կողմից:

*

Հայկական ընտրութիւնների խնդրի մասին Կ. Պոլսից հետո գրում են հետևեալը.

Կ. Պոլիս, 14 յուլիսի

«Քրանսիական կառավարութեան նախաձեռնութեամբ, Քրանսիայի, Ռուսաստանի և Անգլիայի գեսպանները ընտրութիւնների մի ծրագիր կազմեցին Անատօլիայի այն վիլայեթների համար, որոնք բնակեցրւած են հայերով: Ծրագիրը յանձնւեց Բ. Գոսն ուսաց գեսպանի միջոցով»:

*

Գերմանական մի քանի թերթերում հրատարակւեց հետևեալ հեռագիրը, գրւած Կ. Պոլսից՝ յուլիսի 7-ին.

«Անգլիայի, Քրանսիայի և Ռուսաստանի գեսպանները ձեռնարկել են պահանջել Բ. Գոսնից, որ նա մտցնէ հինգ հայաբնակ գաւառներում միևնոյն ընտրութիւնները, ինչ որ և Մակեդօնիայում»:

*

Յուլիսի 7-ին, Պարիզի քաղաքային գլխաւոր խորհրդի նիստում, ընթացիկ հարցերի աւարտումից յետոյ, պ. Կոլլե խօսք խնդրեց՝ կարմիր սուլթանի ոճրագործութիւնների դէմ բողոքելու համար:

«Ամենուրեք—ասաց նա—թայան, սպանութիւն, սուերմուք, շաբաթ չէ անցնում, որ դիւր ջաւերէր, կրակի չմտնուէր: Եւ դրա հետ միասին՝ անվերջ խաբէրալութիւններ և կեղծ լուրեր, որ ամեն օր հրատարակ է դիւրում օսմանեան դեպքանասան կողմից՝ եւրօպական հասարակաց կարծիքը քնեցնելու նպատակով: Կատարւած չարագործութիւնների ջերմութիւնը հետարւած չարագործութիւնների ջերմութիւնը չէր բերում լի կեղծ հեղքումներ: Այդօրինակ պայմաններում քաղաքակիրթ ազգերը հրամայական պարտականութիւն ունենէ՛ն եռանդաբէն բողոքելու և միջոցներ ձեռք առնելու, որպէսզի այդ յանդուգն աներեսութեան վերջ տրւի»:

Հռետորի գեղեցիկ ձառնից յետոյ՝ առաջարկւեց հետևեալ բանաձևը.

«Գլխաւոր խորհուրդը ցանկութիւն է յայտնում, որ հասարակական կառավարութիւնը, հաւատարիմ թողլերին

պաշտպանելու իր աւանդութեան, անմիջապէս ձեռք առնի այնպիսի միջոցներ, որոնք անհրաժեշտօրէն բոլորում են Հայաստանի արդի կայսրութիւնից, նպատակ ունենալով ըստ կարելւոյն շուտ վերջ տալու այս հրեշաւոր պէտտին, որը անարդանք է ամբողջ մարդկութեան համար»:

Քրանսիական մայրաքաղաքի գլխաւոր խորհուրդը այդ բանաձևը ընդունեց միաձայն օ գ և օ ր օ ւ թ ե ս մ ր:

*

Կենք ստացանք ուս-թիւրքական սահմանագլխից մի գ ա զ տ ն ի հ ե ո ա գ ր ի պատճէնը, որը տպագրում ենք ամբողջութեամբ, իբրև մի պաշտօնագիր: Հեռագիրը ուղղւած է Սարիղամիշ, սահմանագահ ուս գնդի պետի կողմից:

Տ Ն Ռ Ա Գ Ի Ր
N° 28

Կարաուրգամ

«Հաղորդում եմ, որ յունիսի 7-ի առաւօտեան, թիւրքիայում, կարաուրգանից եօթ վերստ հեռաւորութեան վրայ, Խօրուշտուզ դիրքի մօտ գտնուող հին ամրութիւնների մէջ երևան եկաւ հայկական մի խումբ, որը դիմաւորեց թիւրքաց զօրքին հրացանաձգութեամբ: Հետևակ զօրքի մի քանի վաշտեր, որոնք արագօրէն վրայ հասան, շրջապատեցին դիրքը: Սկսեց տենդային հրացանաձգութիւն, որ շարունակւեց մի ամբողջ օր: Թիւրք զօրքերը առաջարկում էին անձնատուր լինել խումբը մերժում էր: Երեկոյեան զօրքերը սկսեցին յարձակում Խումբը ընդունեց հարւածը, թափելով ձեռքի դիմամիտային ուռմբեր. կատարեալ ձախտամարտը վերջացաւ խմբի կատարեալ ջնջումով. ազատւածներ չկան: Հայ դիակներ 54 են, նիեր՝ 27: Թիւրքերից սպանւած են վաշտի հրամանատարը, վերաւորած է զօրագնդի առաջնորդը, զինւորներից սպանւած են 115: Ենթադրում են, որ այդ վերջին թիւրք քչացրւած է: Շրջանի մէջ խմբի անցքի ոչ մի հետք չկայ: Թիւրքերը ենթադրում են, որ նա անցել է Իսնամ Զօրուի և Կէջնիգբերտի մէջտեղից, ուր մինչև կէս գիշեր կարկուտ էին ահակոչնակը տաճկական պահականոցներում, որի միջոցին վերաւորեց մի թիւրք զինւոր: Թէև թիւրքերը համարեա ամէն գիշեր հաւար են կանչում. բայց ստորաձեռն լուրերի հիմքերը խախտու են. Ամսի 7-ին հաւարը հնչում էր լողոր թիւրքական պահականոցներում, որոնք զետեղւած են սահմանի որսապտոյտ գծի վրայ, որով և բացատրւում է զինւորի պատահական վերաւորելը»:

Ստորագրած է՝ Ռ. օ մ ս ն ի ս ի օ

*

Ֆինլանդիան կանգնած է նոր փորձանքի դիմաց: Եւզինէլ Շառւմանի ձեռքով սպանւած Բօբրիօվի փոխարէն ցարի կառավարութիւնը երկրի կառավարութիւնը յանձնեց Օբօլինսկուն, Նիկօլա II-ի հրապարակական լիազօրութեամբ՝ շարունակելու ուսացման գործը նոյն հաստատականութեամբ: Դա մի նոր վերաւորանք է ուղղած վշտահար երկրին: Պէկէեան այդ վերաւորանքը չի ծնի արդեօք մի նոր Շառւման, իբրև մարմնացումն ֆինլանդիան վրէժխնդրութեան:

*

Անգլիական արտաքին գործերի մինիստր լորդ Լանդրստաուն մի նամակով ուղղւած անգլո-հայկական ընկերութեան նախագահ Ստեֆէնսընին, յայտնում է, թէ ինքը առաջարկեց է, որ «Ասիի անգլիական փոխ-հիւպատոսը ընկերանայ այն թուրք վաշտերին, որոնք բար-

ձրանալու են Սասուն՝ ապստամբների գէմ գործելու համար: Այդ նպատակով կապիտան Տըրբըլ արդէն հասել է Մուշ յունիսի 6/19-ին:

Մուշից յունիս 16/29-ից գրեած մի նամակով մեզ հաղորդում են, որ յիրաւի վանի անգլիական հիւպատոսը հասաւ Մուշ, և նոյն ամսի 10/23-ին բարձրացաւ Սասուն, որտեղից դեռ չէ վերադարձել:

Համաձայն Տըրբըլի տեղեկութեան, որ նա ուղարկել է Լօնդօն, սպանուած հայերի թիւը 1400-1500 է:

*

«Դրօշակի» խմբագրութիւնը, յունիսի 29-ին ուղարկեց Լօնդօնի Հայաստեանցի մտնիզին հետեւեալ հեռագիրը՝ ուղղած նրա նախագահ Ջէմս Բրայսի հասցէին.

«Ողջունում ենք յարգանքով Միջազգային ժողովը, գումարած ներկայ պատեհ ընդհանր: Սասունի մէջ տեղի ունեցած վերջին արիւնակից դէպքերը իրաւունք են տալիս յուսալու, որ ներկայ համախմբուած կուսենայ յատուկ կարեւորութիւն և կ'որոնէ միջոցներ՝ վերջ տալու բնաջնջման գործին, որին ձեռնարկել է Մեծ-Մարդասպանը Հայաստանի մէջ: Սիրում ենք յուսալ, որ վերջին ծայր ողբերգական այս պայմաններում՝ դուք կը գտնէք գործնական և շուտափոյթ միջոցներ՝ ստիպելու դիպլոմատիային, դուրս գալ իր յանցաւոր անգործութիւնից և վճռական մի բայլ անել: Եւ եթէ այդ անհնար է, կարծում ենք, որ այդ դէպքում ամէն մի զգալուն մարդու պարտքը պիտի լինի աջակցել այն տարրերին, որոնք ձգտում են զինել տանջող ժողովուրդը նրա կեանքի և պատւի տարրական իրաւունքները ապահովելու համար»:

Պ Ա Շ Տ Օ Ն Ա Կ Ա Ն Ա Ջ Դ Ե Ր

Տ Ե Ռ Օ Ր

Ջրաբերդի կենտրոնական կոմիտէի որոշումով տէօօրի ենթարկւեց Ծայնեցի յայտնի մասնիչ Ա Դ Ը Ը: Սպանութեան միջոցին՝ մեծ որդին կամենալով պաշտպանել հօրը, նոյնպէս գնդակահար եղաւ: Դէպքը ազրոտպաւորութիւն թողեց գիւղական ժողովուրդի վրայ, որը անէծքի ու նախատիքի երգեր է հիւսել Արբըլի, իր գերդաստանի ու ամբողջ սերնդի վրայ: Այդ տէօօրը միաժամանակ սոսկում ազդեց շրջանի ուս կաշտակեր պաշտօնեաների վրայ, որոնք մինչև իսկ քաղաք չեն գալիս, երկիւղ կրելով յեղափոխական գնդակից: Տէօօրիսները ազատ են:

ՋՐԱԲԵՐԴԻ ԿԵՆՏՐ. ԿՕՄԻՏԷ

Ն Ի Ի Ր Ա Տ Ի Ո Ի Թ Ի Ի Ն

ԱՐԵՒՍՏԵԱՆ ՔԻՒՐՈՆ ստացած է՝

Անգլիա. — Լոնդօնից՝ Յակոբ 1 շիւ, Պետո 4 շիւ 6 բէն, Բաֆֆի 2 շիւ 6 բէն, Արագ 1 շիւ, Փ. 2 շիւ 6 բէն, X. 2 շիւ 6 բէն, Ոմ 3 անգլիական ոսկի, 9 շիւ 6 բէն: Ալպ. կոմիտէից 87 Քր. 50 ս.: Գումար 8 ոսկի անգլ., 13 շիւ, 6 բէնի: Ռոսիայից. — Բրայիլայից՝ 70. աղա Պապատաղցի, 5 Քր., Միւ. Չալ. 5, Մով. աղա 5, Սեր. աղա 5, Հալբաս 5, Ս. Բօլ Միւ. Գան. 2, Մարկ. Օհան. 1, Յար. Դազ. 2, Պետ. Ար. 60, Փօքշանից՝ Բալէկ 28 Քրանք: Բրայիլայից՝ Սեւ գլխարկ 10 Քրանք, Վրէժնադի 30, Առիծ 10, Կորին 10: Գումար 183 Քրանք:

Ծ գ ի պ տ ո ս. — Գահիրէի Կ-ից 1,148 Քրանք: Սոսիան (Աֆրիկա). — Խարտում քաղաքից՝ 30 անգլիական ոսկի հանգանակած ի նպաստ երկրի կուռնիքի. Նիքատունըն են՝ Օ. Տ. 200 եգիպտական դահեկան, Սեդրակ 9700 500, Խ. 750, Փայակ 300, Կ. Ա. 100, Տ. Գասպարեան 57. 20, Լուսաւոր 100, Պ. Գոլոմեան 100, Յ. Ստեփանեան 60, Յարդին 20, Գ. Իշխանեան 100, Յովսէփ Ա. 100, Մ. Ա. 30, Ա. Իգմիրեան 210 դահ.: Բոսնիայից. — Օժկաղօս ք-ից՝ Գ. Կարապ. 5 Քրանք: Եվէյցաբիա. — Բ. զիւղից՝ հայաստ. զվէյցարուց 10 Քր.: Ռոսաստան. — Նիկօլ ք-ից՝ Մ.-ից 3 ուղղի: Համազումար 2322 Քրանք, 50 սանտի:

ՈՍԿԱՆԱՊԱՏԻ տեղական կոմիտէ՝

1904 թ. փետրուար ամսի 28-ից մինչև մայիս 18. —

Մաս կամ Ազատութիւն խումբ	անդորր.	Ն՝	ոուրի
Խարոյզ	"	25	100,
Թաքախայից	"	26	50,
Հին Մասիսի հին ծառայողներից	"	27	150,
Դալի-Բաքա խումբ	"	28	50,
Արշակունի	"	29	13,
Ժախած պատկերներից	"	30	25,
Հրատ	"	31	7. 40,
Կրակ	"	32	14. 70,
Մաս կամ Ազատութիւն	"	33	33. 60,
Դերոյեան	"	34	150,
Վրէժնադի	"	35	22,
Յորդանան	"	36	11,
Քանքար	"	37	20,
Մի խումբ ծառայողներից	"	38	8. 50,
Շղթայ միութիւնից	"	39	18,
Մաս կամ Ազատութիւն	"	40	150,
Կար-ից	"	41	200,
Դերոյեան	"	42	34. 70,
Ս. Փ.-ից	"	43	112,
Օ. Ն. Ա.-եանից	"	44	10,
Նոկ-ից	"	45	10,
Մ. Տ.-ից	"	46	2,
Գրականական ֆոնդից	"	47	10,
Վիճակախաղից Խառատի միջոցով	"	48	50,
Ն. Ա.-ից	"	49	10,
Սարսափ խումբ	"	50	2. 50,
Դալի-Բաքա	"	1	27,
Դալի-Բաքա	"	3	15,
Պետարլէնի	"	4	15,
Հատկապ քէֆից	"	5	44,
	"	6	10,

Կը շարունակէի

ՎԱՍՊՈՒՐԱԿԱՆԻ ԿԵԴՐ. ԿՕՄԻՏԷ՝

1903 թի նոյեմբերէն մինչև 1904 ապրիլ. — Խ շ տ ո ս ի ք. — Չապուզօս Վարդիչ 208 դահեկան, Բաղդ 100, Խ շ տ ո ս ի ք. 25, Կակոս 80, Բժէ 15, Բաղդօ 80, Վարդիժ 216: Ծ ո դ ա լ. — Զարմայր 60, Բաղդօ 540, Ռէւ 108, Խէրանեան 108, Բերդազնի Ռէսից 516, Բերդազնի Գօկտից 108, Բերդազնի Նրէցից 1080, Աւէտ 1080, Սամուէլ 532, Արծիւ խմբ. 10, Բարն ընդ գեղի Բալարի խմբ. 33, Արածանի խ. 17. 20, Խոսրովա ընդ գեղի Բալարի խմբ. 40, Բարն ընդ գեղի Բալարի խ. 40, Բարն ընդ գեղի Բալարի խ. 40, Լեռ-գեղի ծառայի խ. 40, Բարն ընդ գեղի Բալարի խ. 30, Փշոտ նաժոյր գեղի Վաղարշ խ. 75, Տոթոս գեղի Զալաւոր խ. 20, Կուռ խ. 25, Գեղի Բազրատ խ. 25, Բրնձակ գեղի Եաթըր խ. 20, Կուռ խ. 26. 10, Վարդից 40, Գետափ գեղից 10, Խիւրակ գեղից 15, Սֆինքս գեղի Արա խ. 20, Արածանի խ. 15, Մաս գեղի Բարն ընդ գեղի Բազրատ խ. 20, Տիգրանից 40, Տիգրանից գեղի Զօպանտուր Պօղոս եղբորից խ. 20, Յովհաննէսից 80, Զալաւոր խ. 40, Արծիւից 10, Վեպին գեղի Գուրզէն խ. 10 դահ.: Գումար 5482 դահեկան 30 փարս:

ՃԼԱՑ ԿԵԴՐ. ԿՕՄԻՏԷ՝

Առ 15 յունուար 1904 թ. — Արշակի պատկից 10 ոուրի, Զօպանից քիւնի փոխարէն 25, Կարօ խմբ. 60, Արշակյա խմբ. 60, Վրէժ խմբ. 13. 25, Տիգրանիկի մկրտութիւնից 5, Կրէտացիից 30, Նո-րահի կոմիտէից 300, Վրէժ խմբ. 70, Կարօ խմբ 60, Բնի րահի կոմիտէից 300, Արշակյա խմբ. 50, Լուսաստղից 215, Մարդուկէսից խմբ. 50, Արշակյա խմբ. 50, Լուսաստղից 80. 30, Զէրբէգից 25, ամսավճարներից 50, Բուժարան կոմիտէից 80. 30, Զէրբէգից 25, Բնի խ. 28. 31, Կարօ խ. 40 ու: Ընդամենը 1161 ու 76 կօպէկ:

ԱՆՔՍԱՆԳՐԻՈՑ ԿՕՄԻՏԷ՝

Յունաստանի «Կիլիկիայ» խումբի ըրած ի նպաստ Սամոյ հանգանակութենէն. — Ե. Կ. 40 դրախմի, Գ. Բ., Պ. Տ., Մ. Ա. 35-ական, Սուր Զարաժեան, Զ. Մ., Ե. Գ., Պ. Տ. Սմբատ, Ա.

Թ. Ա., Յոյսի պսակ ընկ., Ա. Ճ., Կ. Մ., Գ. Ն., Մ. Մ., Թ. Ա., Կաթիլ ընկ. 30-ական, Գ. Ե., Գ. Մ. 25-ական, Ա. Զ. 20, Գ. Ե. 16, Ն. Ե. 14, Ոմն, Գ. Թ. 10-ական, Ե. Կ. 7, Տէլիեանի, Ե. Տ. Ե., Ե. Օ., Ե. Գ., Մ. Ա., Թ. Գ., Թ. Գ., Ա. Գ., Լ. Մ., Մ. Վ., Գ. Պ., Տ. Գ., Կ. Ս., Գ. Ս., Գ. Ս., Մ. Ե., Խ. Խ., Լ. Մ., Գ. Գ. 5-ական, Փ. Գ. Խ. Ա. Գ. 6, Գ. Մ. 3, Օսկար, Ա. Գ., Զ. Ե., Ա. Ե. Ժ., Վ. Ե. 2-ական, Ե. Տ. 1, «Կիլիկիայ» խմբից 125, Խ. Կ. 5, Ոմն Ե. 3, Ե. Սրապեան 2 դրամի: Ընդամենը 877 դրամի:

ՄՐԿԱՍՏԱՆԻ ԿԵԴՐ. ԿՕՄԻՏԷՆ՝

1903 թ. սեպտ. 15-ից մինչև փետրվարի 1-ը 1904 թ.

1. Քաղաք

Նւէր Ոմն եւ Թղթախաղից 5.81 ուրբի, Թղթախաղից 15, Գետեւեալ խմբերից՝ օր. Զարուհի Դերոյեան 25.50, վաճառականների Ո. Խ. 14, Սլաց 30.85, Երագ 20.35, Կաշքերունի 16, Փոննը 9, Արնջար 9, Արամեան 11, Երկաթ 33, Մարագ 10, Պատանեակ 5.15, Մնշածնկը 3, Արհեստաւորների խմբ. անդամավճար 49.60, Նոյն խմբից պայտր օժնէ: 70.10, Նոյն խմբից նկարվածք 39, Գործակալարների Ո. խմբ. պայտր օժնէ: 70.10, Ժի-ժենակալերը խմբ. անդամավճար 12, Նոյն խմբի քլիֆից 28.87, ՄՆշիկ 4, Դաշոյն 14, Սովորողներից Ար-ի միջոցով 8, Լատից 1 նագան ատրճ. 46 փամփուշտ, Մակեցուց 1 հրաց. 74 փամփուշտ:

2. Քաղաքամաս

Հինգ խմբի անդամավճար 88.14 ուրբի, Հացկերոյից 86.48, Թառ գիւղ. 5 խմբ. 30, Այսօր օժն է 52 ուրբի:

3. Արշէքժամ շրջան

Աղասի խմբ. 25 ուրբի, Հրազդան խմբ. 36.90:

4. Զրաբաշխի շրջան

Փրկիչ գիւղի 3 խմբ. 11.50 ռ., Նոյն գիւղի Նահապետ ի. 7.65, Նոյն գիւղի Ճաշկերոյից 25, Արամայիս գիւղի խմբից 15.75, Գարինի գիւղի խմբից 9.6, Նոյն գիւղի Կիրժ եւ Երկաթ խմբ. 5.70, Աւարայր գիւղի խմբից 8.30, Խաչքարի Համեստ ի. 4.45:

5. Գառ-Բաշի շրջան

Գառնիկ խմբ. 18.10 ուրբի, Արիագեան խմբ. 10.10, Կայ-ձակ 2, Սարսափ 2.35, Աղբիր 0.45, Գակազ 0.85, Երկաթ 2.30, Պայծառ 1.30, Նեմլ 20 ծնը վժ 1.45, Մարդաշատ 3.10, Սինասար 3.30 ուրբի:

6. Ծաղկաձորի շրջան

Կարմիր գիւղի խմբերից՝ Վազգէն 11.65 ուրբի, Աղբիր 6.20, Կարնինի ծաղկեր. 4.1, Նոյն խմբ. անդամավճ. 4.95, Ցամաք գիւղի Արարատ-վառող խմբ. 4, Ցամաք գիւղի Ցամաք խմբ. 2.50, Զորաւոր գիւղի Արծիւ խմբ. 6, Փառանջակերտ գիւղ. 7.70, Նոյն գիւղի 4 խմբից 12.80, Գծուճ գիւղի անդամավճար 45.80, Կապուտ-խաչ գիւղ 17.55, Հալապ գիւղ 6.65, Նոյն գիւղի Սալմաստ խմբ. 2, Հրազդան գիւղի խմբերից՝ Գնդակ 3.85, Վառող 2.90, Կայծակ 3.20, Ծաղկերոյից 2, Միհ-րան գիւղի խմբերից՝ Ժաղիկ 3, Ծռանդ 2.70, Արկած 2.70, Նորաջէն գիւղ 1.80, Նոյն գիւղի խմբերից՝ Դաւան 6, Վրէժ 5.30, Զարմայր 4.40, Դրիմ 1.80, Ալիք 1 ուրբի:

7. Լճակի շրջան

Վազաւան գիւղ Վահ. միջ. 10 ուրբի:

8. Նիգ շրջան

Թորոս-Բէշան 1.50 ուրբի, Կարտիզի Խաչ խմբ. 2.70, Ցից-բար ի. 1.55, Բիւլ գիւղ 3, Կաշ 1.60, Ժիլալ ի. 9, Ախուրեան ի. 12, Հարսանիցից 2, Մանգեան 8, Անիճ 9.20, Հարսանիցից 9.5, Կարսայ գիւղի խմբերից՝ Լուսաղբիւր 2.70, Կարտա 3.60, Աղբիր 1.95, Գայլ 2.55, Երիտասարդ 1.35, Որոտ 9.85, Վարդ 9.30, Գաջլեան 1.55, Չոր 2.60, Դար 0.90, Երէց 2.10, Բիւր 5.55, Ցուակ գիւղի Ցամաք ի. 6, Վիճակ գիւղի խմբերից՝ Թամիւր 13.20, Կիսանը 9.60, Տարաղ 19, Ետրոյն 6.65, Խաչքար 9.80, Արծուն 6.30 ուրբի:

9. Չորի շրջան

Չոր գիւղի 14 խմբի անդամավճար 69 ուրբի, Հազարակ գիւղի 4 խմբ. 10.80, Հարիւրակ գիւղի 4 խմբ. 10.40, Մնտառ գիւղի 1 խմբ. 7, Հազարակ եւ Հարիւրակ խմբ. 13.85 ռ.:

10. Բարձր տեղ

Անդամավճարներ 34.85 ուրբի:

11. Քասախ

Վաղարշ անդամավճար 36.50 ուրբի, Տօնածառ 20, Դնտե-լիգնտ 22, Սրբավայր 30, Բեթանտաղ 11.60, Ալատաղ 11.60, Մոկաց 20, Զուարթ 20.50, Արար 14, Աւարայր 11, Ազատ 3.60, Հրաւերից 16.70, Վասպուրական 15, օր. Կրկնոյթ եւ վիճակ. 34.18, Սեպուհ 53.50, Կարաբաշ 3.35, Երանդակ 10.35, Մար-տական 1.25, Ժերուկ 2.60, Հրացանից 23.50, Մեծամորից 18.45, Մեծ Եղեւսիցից 27, Փոքր Եղեւսիցից 5, Գետափից 5.60, Ցա-ւաքից 20, Ցաւակից 14.67, Աղիւսայրից 9, Նուրից 2.25, Բող-բոջից 3, Բուրաստանից 6, Մանկասարից 5.50 ուրբի:

12. Արմաւիր

Մասիս խմբից 24 ուրբի, Սալբանդ գիւղի Ստա խմբ. 29, Արմաւիր գիւղ Գրախտի միջ. 48.80, Եր գիւղի Հանք խմբ. 80, Նոյնի Արամայիս խմբ. 5.20, Զ-Լի գիւղի խմբերից՝ Անկախ 17.50, Մուրճ 2.45, Արծրունի 3, Հրազդան 3.50, Պա-րիսակ գիւղի հարսանիցից 16.25, Նոյն գիւղի Նւէրներ 30, Նոյն գիւղի Արուեսակ խմբ. 32, Լուսափայլ 10, Այծրու գիւղ պայտր օժնէ 120.25, Եահ-Կարոյից Նւէր 10, տուգանք Մ-ից 5, տու-գանք Հ-ից 3, տուգանք Մատ-ից 10 ռ., Տէրխանից 1 բերում, Մուրատից 1 բերում:

13. Արարատ

Բարբիթ գիւղի խմբերից՝ Յուսիկ 10 ուրբի, Կարասար 19, Աշխոյժ 8, Ցուակ 8, Թափանցիկ 6, Հողակոյտ գիւղի Վրան խմբ. 2.50, Օգնական խմբ. 7.50, Թերթով 39, Կենտրոն գիւղի խմբերից՝ Պարտէզ 13.50, Դաշոյն 3, Զուլակ 5, Մորակ 3, Մասիս 3, Ժաղիկ 5 ուրբի:

14. Ազատ դաշտի շրջան

Պողատու պարտէզ գիւղի խմբերից՝ Հին արհեստաւոր 13 ուրբի, Նոր արհեստաւոր 25, Նոր-վաճառ 15, Մանկավարժ 13.25, Արատ 20, Ամուր 16.15, Լոբի 10.90, Արշաւիք 6.25, Երանդ 9.30, Ազնիւ գիւղի խմբերից՝ Երկաթ 21.50, Փոր-ձած 17.90, Արատ 13.10, Վարդ 10.60, Արամ 4, Արծիւ 8.20, Ազարակ գիւղ եւ անդամից 10, Նոյն գիւղի Գոհար ի. 11.65, Գետասարը, Կայծ, Մորակ, Ժերթից, Հեղեղատ խմբերից 68.10, Երիտասիք ի. խմբ. 12, Արարտ գիւղի խմբից 65.30, Խնձոր գիւղի Մանուկ խմբ. 1.75, Արարակ գիւղի Որոտան խմբ. 11.20, Նոյն գիւղի Երկու խմբ. 24, Բոյն գիւղի Արմատ խմբ. 7.80, Նոյն գիւղի Կարկուտ խմբ. 5.15, Բարձր գազաթ N° 1 4.40 ռ.:

15. Տրտուռի շրջան

12 խմբերի անդամավճար 63.30 ուրբի:

16. Արփաշայի շրջան

Թերթով հանգանակած 74.25 ուրբի, Գետեւեալ խմբերից՝ Կառուս 20.80, Վան 12, Բէզ 6, Ազատ 2.50, Զուլակ 10.50 ռ.:

17. Վայոց Չորի շրջան

Նրբավայրից հանգանակ. 64.80 ռ., Հողային գիւղեր 14 ռ.:

18. Նոյեան տապան

Ալի Արծիւ խմբ. 24 ռ., Ալի Միջազետ խմբ. 10.30 ուրբի:

19. Հովիտի շրջան

Չոմք գիւղի Ներկայացուցից 28.30 ուրբի:
Ընդամենը գումար 3,990 ուրբի 20 կօպէկ:

ԵԿԵՂԵՑԻԻ ԿԵԴՐ. ԿՕՄԻՏԷՆ՝

Նոր-Արմաւիրում՝ Սիբիրեանից չայ-Գուսանի միջոցով 35 ռ., «Նաւաբանդ» կօմիտէի շրջանում՝ Հ. Մ-ից Գուսանի միջոցով 25, «Թնդա-նօթ» ենթակօմիտէից՝ հանգանակած Գուսանի եւ Սուկաւի միջո-ցով՝ Կ. Ա., Մ. Ա., Վ. Բ., Մ. Ա. 10-ական ուրբի, Ա. 2., Ռ. Գ. Ս. 5, Խ. Ս. 5, Ս. Ս. 20, «Օգուտ» ենթակօմիտէից՝ Գ. Մ. 10 ուրբի, Լ. Խ. 10, Տ. Ս. Մ. 10, Ու. Ս. 20, «Գալիբան» ենթակօմիտէից՝ Գ. Մ. 100 ուրբի, Ս. Գ. Ե. 20, Ն. Տ. 15, Մ. Տ. 10, Բ. Զ. 5 ուրբի: Գումար 505 ուրբի:

Մեր խմբագրութեան հասցէն՝
Rédaction du «Droschak», Genève (Suisse)